

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2017

Երաշխավորվել է տպագրության ԿՄԱ գիտական խորհրդի կողմից

Անահիտ Հարությունյան, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գասպար Ավագյան, փիլ. գիտ. թեկ., դոցենտ

Աննա Սուքիասյան, կենսաբ. գիտ. թեկ., դոցենտ

Խմբագիրներ՝

Բ.Գ.Գասպարյան, ֆիզ.մաթ. գիտ. թեկ., դոցենտ

Ա.Հ.Քալոյան, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Համակարգչային ձևավորումը՝ Վերժինե Հովհաննիսյանի

Ձեռնարկը նախատեսված է համալսարանի ներքին ու արտաքին շահակիցների համար:
Այն կոչված է բարձրացնելու բուհի շահակիցների տեղեկացվածությունը որակի
ապահովման քաղաքականության և դրա իրականացման չափանիշների, չափորոշիչների,
մեխանիզմների ու գործիքակազմի հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----5

Գործածվող հապավումներ, հասկացություններ-----7

ԳԼՈՒԽ 1. Երևանի «Հայրուսակ» համալսարանը ՀՀ բարձրագույն կրթության համակարգում

1.1. Համալսարանի մասին-----10

1.2. Համալսարանի կառուցվածքի սխեման-----13

1.3. Համալսարանի առաքելությունը և կրթության որակի ապահովման ուղենիշները----13

1.4. Համալսարանի 2016-2020 թթ. ռազմավարական ծրագիրը և որակի ապահովումը---15

Գլուխ 2. Համալսարանի որակի ապահովման համակարգը

2.1. Համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը-----23

2.2. Որակի ապահովման սկզբունքները և մոդելը-----25

2.3. Որակի ապահովման չափանիշները-----26

2.4. Համալսարանի որակի ներքին ապահովման համակարգի ձևավորումը-----27

2.5. Որակի ներքին ապահովման համակարգի կառուցվածքը և որակի ապահովման կենտրոնի իրականացրած աշխանքները-----28

2.6. Որակի մշակույթի ձևավորման ու զարգացման կարևորագույն նպատակները-----32

2.7. Ինքնավերլուծությունը՝ համալսարանի որակի ապահովման համակարգում-----33

Գլուխ 3. Մասնագիտական կրթական ծրագրերի մշակումը, հաստատումը, մշտադիտարկումը և պարբերական վերանայումը

3.1. Մասնագիտական կրթական ծրագրերին և դասընթացների մոդուլներին ներկայացվող պահանջները, մշակման սկզբունքները-----35

3.2. Մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և պարբերաբար վերանայման ընթացակարգերը----36

3.3. Մասնագիտական կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկումը, պարբերական վերանայումը-----41

Գլուխ 4. Կրեդիտային համակարգի էությունը և գործառույթները

4.1. Կրեդիտային համակարգի էությունը -----	43
4.2. Կրեդիտային համակարգի գործառույթները-----	43

Գլուխ 5. Սովորողների ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման համակարգը

5.1. Գնահատման քաղաքականությունը, սկզբունքները, նշանակությունը ----	45
5.2. Սովորողների ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման կարգը -----	45

6. Հավելվածներ

6.1. Երևանի «Հայբուսակ» համալսարանի կրթության որակի ապահովման կենտրոնի կարգ -----	63
6.2. Երևանի «Հայբուսակ» համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և իրականացման ընթացակարգերը-----	66
6.3. Երևանի «Հայբուսակ» համալսարանի կրթության որակի ապահովման կենտրոնի հարցաշարերը-----	71
6.4. Բենչմարքինգի քաղաքականությունն ու ընթացակարգը-----	88
6.5. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական գիտելիքների ու մանկավարժական կարողությունների և հմտությունների անձնագիր-----	93
6.6. Երևանի «Հայբուսակ» համալսարանի ամբիոնների դասալսումների անցկացման կարգ -----	96
6.7. Դասընթացի նկարագրի օրինակելի ձև-----	97
6.8. Երևանի «Հայբուսակ» համալսարանի ուսանողի իրավունքներն ու պարտականությունները-----	100
6.9. Երևանի «Հայբուսակ» համալսարանում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկ-----	102
Վերջաբանի փոխարեն-----	104
Օգտագործված և մեջբերված գրականության ցանկ-----	105

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կրթական համակարգի բարեփոխումների ներկա փուլում առաջնահերթ խնդիրը կրթության որակի ապահովումն է: Որակի ապահովման սույն ձեռնարկը մշակվել է այդ խնդրի լուծմանը նպաստելու և համալսարանի բոլոր շահակիցների ջանքերը համախմբելու նպատակով: Այն ներառում է բուհում կրթության որակի ապահովման գործընթացի քաղաքականության կենսագործման նպատակով մշակված փաստաթղթային փաթեթը և միջազգային ու ազգային չափանիշներն ու չափորոշիչները:

Ձեռնարկը նպատակ է հետապնդում օգնել ուսանողներին, դասախոսներին, վարչական անձնակազմին, ինչպես նաև արտաքին շահակիցներին՝ իրազեկված լինել կրթության որակի ապահովման գործընթացների մասին և սեփական ներդրումն ունենալ իրականացվող բարեփոխումներում:

Աշխատությունը բաղկացած է 5 գլուխներից և հավելվածներից:

Առաջին գլխում համառոտ ներկայացված են համալսարանի անցած ուղին, բուհի առաքելությունն ու 2016-2020թթ. ռազմավարական ծրագիրը և դրանց կապը որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման հետ:

Երկրորդ գլխում ներկայացվում է համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը, համակարգի ստեղծման սկզբունքները, մոդելը, չափանիշները, որակի ներքին ապահովման համակարգի կառուցվածքը, խնդիրներն ու գործառույթները, որակի մշակույթի ձևավորման նպատակները և ինքնավերլուծության դերը՝ որակի ապահովման համակարգում:

Երրորդ գլխում շարադրված են մասնագիտական կրթական ծրագրերի ու դասընթացների մոդուլների մշակման սկզբունքներն ու դրանց հաստատման, մշտադիտարկման, գնահատման ու պարբերաբար վերանայման ընթացակարգերը:

Չորրորդ գլխում համառոտ ներկայացված է կրեդիտային համակարգի էությունն ու գործառույթները:

Հինգերորդ գլուխը նվիրված է ուսանողների գնահատման համակարգին, այդ թվում՝ ակադեմիական ազնվության ապահովման խնդիրների լուծման հարցերի լուսաբանմանը:

Հավելվածներում բերված են համալսարանի կրթության որակի ապահովման կենտրոնի կարգը, որակի ապահովման քաղաքականությունը եվ իրականացման ընթացակարգերը, բենչմարքինգի քաղաքականությունն ու ընթացակարգը, արտաքին ու ներքին շահակիցների հետ անցկացվող տարբեր սոցիոլոգիական ուսումնասիրությունների հարցաշարերը, ուսանողի իրավունքներն ու պարտականությունները և այլն:

Ձեռնարկը մշակելիս առաջնորդվել ենք «Մասնագիտական կրթության որակի

ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի համապատասխան ձեռնարկներով ու ուղեցույցներով:

ԳՈՐԾԱԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ, ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասցավորումներ

ԲՈՒՀ - Բարձրագույն ուսումնական հաստատություն

ԵԲԿՏ - Եվրոպական բարձրագույն կրթության տարածք

ԵԿՓԿ/ ECTS - Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ / European Credit Transfer and Accumulation System

ԵՀՀ - Երևանի «Հայրուսակ» համալսարան

ՄԿԾ - Մասնագիտության կրթական ծրագիր

ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն

ՄՈԳ - Միջին որակական գնահատական

ՈԱ - Որակի ապահովում

ՈԱԿ - Համալսարանի կրթության որակի ապահովման կենտրոն

ՈԱԱԿ - «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ

ՈԵՇ - Որակավորումների եվրոպական շրջանակ

ՈՆԱՀ - Կրթության որակի ներքին ապահովման համակարգ

ՊԻՍԲ - Պլանավորել, իրականացնել, ստուգել, բարելավել

ՈԻԹՀՎ/ SWOT - Ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ/ Strengths, Weaknesses, Opportunities, Threats

Հասկացություններ

Բենչմարքինգ¹ - համանման կազմակերպությունների առաջավոր փորձի համեմատական վերլուծություն՝ սեփական ՄՈՒՀ-ում ներդնելու նպատակով:

ԵԿՓԿ/ ECTS² **կրեդիտ** – ուսանողի ուսումնական ծանրաբեռնվածության չափման պայմանական միավոր, որն արտահայտում է դասընթացի կամ կրթական մոդուլի ելքային

¹ ՈԱԱԿ-ի կողմից 2010թ. հրատարակված Որակի ապահովման տերմինաբանական բառարանում բենչմարքինգը սահմանվում է հետևյալ կերպ. «Կարևորագույն գործառնական տվյալների հավաքման և ներկայացման ստանդարտացված այնպիսի մի մեթոդ, որը թույլ է տալիս համադրել տարբեր հաստատությունների կամ ծրագրերի կատարողականությունը՝ լավագույն փորձի որոշման, գործունեության հիմնախնդիրների ախտորոշման և ուժեղ կողմերի բացահայտման նկատառումներով: Բենչմարքինգը տալիս է ուսումնական հաստատությանը (կրթական ծրագրին) իր աշխատանքային գործընթացը կազմակերպելու համար լավագույն փորձ և արտաքին հղման կետեր:Տե՛ս նշված աշխատությունը, էջ 18:

² European Credit Transfer and Accumulation System.

արդյունքի ձեռքբերման համար պահանջվող ժամաքանակը և տրվում է ուսանողին արդյունքների դրական գնահատման դեպքում: Մեկ ECTS կրեդիտը համարժեք է ուսումնառողի 30 ակադեմիական ժամ ուսումնական բեռնվածությանը, այդ թվում՝ լսարանային, արտալսարանային պարապմունքները և ինքնուրույն աշխատանքը:

Կումպետենցիա/կարողունակություն - գիտելիքի, կարողությունների, հմտությունների ամբողջություն, որը կարող է լինել ինչպես մասնագիտական, այնպես էլ ընդհանրական:

Կրեդիտային համակարգ - ուսումնական գործընթացի կազմակերպման, կրեդիտների հատկացման միջոցով ուսումնառության արդյունքների արժևորման կամ հաշվառման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ ուսանողին համապատասխան որակավորման աստիճան է շնորհվում՝ կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի ձեռքբերման արդյունքում:

Կրեդիտների կուտակման և փոխանցման ԵԿՓԿ/ ECTS համակարգ - եվրոպական միասնական կրեդիտային համակարգ, ըստ որի՝ ուսանողի ուսումնական տարեկան բեռնվածքը սահմանված է 60 ECTS կրեդիտ(1800 ժամ): Այն Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում(ԵԲԿՏ) ուսանողների ստացած կրթական արդյունքների պաշտոնական ճանաչման և նրանց ակադեմիական շարժունության ապահովման փոխադարձ ընդունելի համակարգ է:

Կրթական մոդուլ - դասընթացի ծրագրի նվազագույն և համեմատաբար ինքնուրույն միավոր է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի տևողությունը մեկ կիսամյակ է, դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:

Մասնագիտության կրթական ծրագիր(ՄԿԾ) – բարձրագույն կրթության հիմնական բաղադրիչ, որը ներառում է կրթության բովանդակությունը և բնագավառում կատարվող բոլոր գործընթացները՝ ուսուցման կազմակերպում, իրականացում, կառավարում, ուսումնառություն, հետազոտություն:

Միջին որակական գնահատական(ՄՈԳ) - գնահատականների՝ կրեդիտներով արտահայտված միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորը բաժանելով գնահատված կրեդիտների վրա՝ 1/100 ճշտությամբ:

Որակավորումների ազգային շրջանակ(ՈԱՇ) - ազգային մակարդակում ուսումնառության արդյունքների որակավորումների ճանաչումը ապահովող գործիք:

Որակավորումների եվրոպական շրջանակ(ՈԵՇ) - որակավորումների տարբեր համակարգերը համադրելու և աշխատաշուկայի հետագա ինտեգրումը խթանելու գործիք:

Որակ – ՈԱԱԿ-ը «որակ» հասկացությունը սահմանում է որպես. կրթության արդյունքների համարժեքություն՝ հայտարարված նպատակին: Նպատակները պետք է սահմանված լինեն բուհի առաքելության մեջ և կապված լինեն հասարակության պահանջների, ակնկալիքների, կառավարության հաստատած չափորոշիչների հետ: Շրջանառվում են նաև որակի սահմանման մի քանի այլ մոտեցումներ՝ որակը որպես գերազանցություն, կատարելություն, վճարված գումարին համապատասխան ծառայություն, որպես փոխակերպություն և այլն:

Որակի մշակույթ - հաստատության բոլոր ստորաբաժանումների և շահակիցների ներգրավվածություն՝ կրթության որակի բարելավման գործընթացներում և յուրաքանչյուրի պատասխանատվության ստանձնում՝ դրանց իրականացման համար:

Չափորոշիչ - նախապես սահմանված ակնկալիք, արդյունք:

Վարկանիշային միավոր - բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումարը:

Վերջնարդյունք - կրթական ծրագրի կամ ինստիտուցիոնալ որևէ նպատակի իրագործման արդյունք:

ԳԼՈՒԽ 1

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՄԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1.1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Երևանի «Հայբուսակ» համալսարանը հիմնադրվել է 1990թ. ակադեմիկոս Լևոն Հարությունյանի կողմից և ՀՀ կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների կողմից ստացել մի շարք մասնագիտությունների գծով կրթական գործունեության լիցենզիա: Համալսարանը 1999-2001 թթ. մասնակցել է ՀՀ-ում կրթության որակի գնահատման և պետական հավատարմագրման գործընթացին և ստացել պետական հավատարմագիր, ինչը համալսարանի շրջանավարտներին թույլ է տալիս ստանալ պետական նմուշի դիպլոմներ և աշխատել ՀՀ և արտերկրի պետական ու մասնավոր հիմնարկներում (համալսարանի շրջանավարտները աշխատում են *ԱՊՀ-ի գրեթե բոլոր հանրապետություններում, ԱՄՆ-ում, Եվրոպայում, Իսրայելում, Հնդկաստանում, Սիրիայում, Լիբանանում, Իրանում, Քուվեյթում և այլն*), ինչպես նաև շարունակել կրթությունը ՀՀ-ի և արտերկրի հետբուհական կրթական կառույցներում (ասպիրանտուրա, դոկտորանտուրա, օրդինատուրա): 2006թ. համալսարանը Գյումրիում հիմնադրել է ներկայացուցչություն, ապա՝ մասնաճյուղ, որին 2012թ. միացել է Գյումրիի «Անանիա Շիրակացի» համալսարանը, այժմ՝ «Հայբուսակ» համալսարանի «Շիրակացի» մասնաճյուղ: «Հայբուսակ»-ը ՀՀ-ում միակ համալսարանն է, որը կրթության զարգացման և որակի ապահովման նպատակով իր շուրջը միավորում է այլ համալսարաններ: Այսպես, 2006-2013թթ. «Հայբուսակ» համալսարանին միավորվել են Հ.Լազարյանի անվան միջազգային հարաբերությունների ինստիտուտը, Լ.Քալաշյանի անվան հայկական բաց համալսարանը, «Ռոսլին» արվեստի ինստիտուտը, Երևանի էկոլոգիայի, տնտեսագիտության և իրավունքի հայկական ինստիտուտը:

2012թ. համալսարանի և Եղեգնաձորի «Գիտելիք» համալսարանի միջև կնքվել է համատեղ բակալավրի կրթական ծրագրեր իրականացնելու համագործակցության պայմանագիր, ինչն արժանացել է ՀՀ ԿԳՆ հավանությանը և վավերացվել նախարարի կողմից:

Այս գործընթացների արդյունքում համալսարանում ավելացան իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերը և բուհը սկսեց պատրաստել բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մասնագետներ «Միջազգային հարաբերություններ», «Իրավագիտություն», «Կառավարում», «Դիզայն», «Գեղանկարչություն», «Հագուստի մոդելավորում», «Լրագրություն», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Հայոց լեզու և գրականություն»

մասնագիտությունների գծով³: Ստեղծվեց Կրթության միջազգային ակադեմիան (ԿՄԱ): Արդյունքում ԿՄԱ-ն և «Հայբուսակ» համալսարանը դարձել են ոչ պետական բուհերի առաջատարը՝ ինչպես իրականացվող կրթական ծրագրերի, այնպես էլ՝ ուսանողների թվով: Այժմ բուհում կրթություն են ստանում շուրջ 2000 ուսանողներ Հայաստանից և արտերկրից:

1997թ.-ից համալսարանում գործում է բազային քոլեջ՝ միջին մասնագիտական կրթական ծրագրերով, որոնք 2007թ. պետության կողմից հավատարմագրվել են: 2010թ.-ից քոլեջը հանդիսանում է UNESCO-ի միջնակարգ կրթական կազմակերպությունների ասոցիացված անդամ:

2007թ.-ից «Հայբուսակ» համալսարանում գործում է ավագ դպրոց, որի շրջանավարտները ևս ստանում են պետական ատեստատներ:

Հավատարմագրման գործընթացը հաջողությամբ ավարտելուց հետո՝ համալսարանը սկսեց արձանագրել մի շարք ձեռքբերումներ ու նվաճումներ. զգալիորեն ընդլայնվեցին կապերն արտերկրի կրթօջախների հետ, ուսանողների համակազմը ընդլայնվեց սփյուռքահայ և օտարազգի ուսանողներով, ներդրվեցին բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր՝ բոլոր գործող մասնագիտություններով:

Համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպվում է սեփական մասնաշենքերում, որտեղ առկա են համապատասխան ենթակառուցվածքներ և ռեսուրսներ: 1995թ.-ից գործող սեփական մասնաշենքին(Աբելյան 6) ավելացավ երկրորդ սեփական մասնաշենքը(Գրիբոյեդով 15), ինչը աննախադեպ երևույթ է ՀՀ ոչ պետական կրթության համակարգում: Հարմարավետ մասնաշենքով ապահովված է նաև Գյումրու մասնաճյուղը:

Բուհի ռազմավարական խնդիրներից է՝ զարգացնել արտերկրի համալսարանների հետ կապը: Այդ նպատակով համալսարանը մասնակցել է 17 միջազգային կրթական ցուցահանդեսների՝ Երևանում և արտերկրում. 2004 և 2006թթ.՝ Սիրիայում, 2005թ.՝ Մոսկվայում, 2007թ.՝ Լիբանանում: Հաստատվել են կապեր՝ Մոսկվայի Սեչենովի անվ. բժշկական ակադեմիայի հետ (2000թ.), Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի (2004թ.), Լիբանանի Ալ Ջինան համալսարանի (2005,), «Պո-Արաքս» կազմակերպության, Վենետիկի համալսարանի հայոց լեզվի և մշակույթի ամառային դասընթացների (2005թ.), ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հարցերի բաժնի (The US Embassy PAS (Public affairs section) – Forum (2007թ.), Գերազանց բիզնես-գործունեության իններորդ միջազգային ֆորումի (Ժնև, 2005թ.),

³ Այսօր «Հայբուսակ» համալսարանում իրականացվում են բակալավրի, մագիստրոսի, անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրեր 19 մասնագիտությունների գծով(մասնագիտությունների ցանկը կցվում է), որոնք բոլորն էլ լիցենզավորված և հավատարմագրված են: Համալսարանը թույլտվություն ունի իրականացնելու ասպիրանտուրայի կրթական ծրագրեր բժշկական և տնտեսագիտական մասնագիտությունների գծով:

Մոսկվայի բժշկական ռեաբիլիտոլոգիայի ինստիտուտի (2001թ.), Միջազգային կրթության ամերիկյան խորհրդի (2007թ.), «Էլ Արկա» մշակութային-կրթական հաստատության (2012թ.) հետ, Մենեջմենթի եվրոպական դպրոցի հետ (European school of management) (Բսպանիա), Պրեստոնի համալսարանի (Մեծ Բրիտանիա), Լուիզիանայի համալսարանի (ԱՄՆ), Քեմբրիջի համալսարանի (Մեծ Բրիտանիա), Բիզնեսի և հաղորդակցության դպրոցի (Բսպանիա), Դաչ Դելտա համալսարանի (Հոլանդիա), Նյուրնբերգի միջազգային բիզնես դպրոցի (Գերմանիա) հետ:

Համալսարանը ստորագրել է փոխըմբռման հուշագիր ՏԻՐԻ (TIRI) կազմակերպության (Մեծ Բրիտանիա - 2011թ.), Կանադայի ինֆորմատիզացիայի միջազգային ակադեմիայի International Informatization Academy (Canada - 2007թ.), ՌԴ Բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիայի հետ (2016թ.), հանդիսանում է Հայ-Կանադական առևտրային պալատի անդամ (2009թ.):

Երկար տարիներ համալսարանը համագործակցել ու համագործակցում է Tempus, Erasmus + ծրագրերի երևանյան գրասենյակների հետ:

1.2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՄԽԵՄԱՆ



*Համալսարանը հիմնադրել է «Երիտասարդ դիվանագետների ակումբ» և «Շրջանավարտների միություն» ՀԿ-ները, որոնք սերտորեն համագործակցում են բուհի կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

1.3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

Բուհի կրթության որակի ապահովման առաջնահերթությունները ներկայացված են համալսարանի առաքելությունում: Այն բուհի գործունեության տիրույթը և նպատակները, ոլորտը, գործելակերպը, մոտեցումները ներկայացնող փաստաթուղթ է:

Երևանի «Հայբուսակ» համալսարանը տարածաշրջանային կրթական, հետազոտական և մշակութային ինքնավար հաստատություն է, որի առաքելությունն է.

ա/ պատրաստել առողջապահության, կիրառական արվեստի, սոցիալ-տնտեսական և հումանիտար ոլորտների բարձրորակ կադրեր բակալավրի, մագիստրոսի և անընդհատ ու ինտեգրացված, հետազոտողի կրթական ծրագրերով,

բ/ ձևավորել բազմակողմանի զարգացած քաղաքացի, ապահովել ուսանողի հայրենասիրական դաստիարակությունը, նպաստել ազգային ու համամարդկային արժեքների, բարոյական, մշակութային և գիտական նվաճումների յուրացմանը, սերմանել հումանիզմի և ժողովրդավարության գաղափարներ,

գ/ նպաստել հասարակության տնտեսական, սոցիալական ու մշակութային առաջընթացին, ՀՀ և այլ երկրների միջև բարեկամության հաստատմանը, տնտեսական, մշակութային կապերի ամրապնդմանը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Համալսարանն իր առաքելությունն իրագործելիս առաջնորդվում է հետևյալ արժեքներով.

- արդարություն,
- ժողովրդավարություն,
- հումանիզմ,
- հավասարություն,
- արժանապատվություն,
- ակադեմիական ազնվություն,
- արդյունավետություն,
- բարձր որակ,
- մրցունակություն,
- նորարարություն,
- թափանցիկություն,
- հասարակական պատասխանատվություն:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Համալսարանը ձգտում է դառնալ՝

- միջազգային չափորոշիչներին համապատասխան բարձրորակ կրթություն ապահովող և հասարակության, տնտեսության, աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին դինամիկ ու համարժեք արձագանքող հաստատություն,
- միջազգային ճանաչում ունեցող առաջավոր գիտակրթական հաստատություն,
- սոցիալական արդարությանը հետամուտ, նաև հասարակության կարիքավոր ու անապահով շերտերին հասանելի կրթություն տրամադրող բուհ,
- իր բոլոր շահակիցների կարծիքները հաշվի առնող, հասարակական պատասխանատվություն ստանձնող բուհ,
- արդի տեխնիկայով ու տեխնոլոգիաներով հագեցված, առաջադեմ պրոֆեսորադասախոսական կազմ ունեցող հաստատություն, որտեղ իշխում են գործընկերային, համա-

գործակցային հարաբերություններ ուսանողների և դասախոսների միջև, ինչը գրավականն է բազմակողմանի զարգացած քաղաքացու և կոմպետենտ մասնագետի ձևավորման համար,

• ազգային ու համամարդկային արժեքներ արմատավորող ու տարածող, աշխարհի առաջավոր համալսարանների հետ համագործակցող մշակութային և գիտական կենտրոն:

1.4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2016-2020 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Բուհն իր առաքելության իրականացման համար մշակում և իրականացնում է ռազմավարական, միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր: Դրանք փոխկապակցված են: Համալսարանի առաքելությունը, ռազմավարական ծրագիրը, որակի ապահովման քաղաքականությունը մշակվել և իրականացվում են Բոլոնյան գործընթացնեով նախատեսված բարեփոխումներին համաքայլ ընթանալու հրամայականից ելնելով: Բոլոնյան գործընթացը, որի հիմքում ընկած են համալսարանների մեծ խարտիայի սկզբունքները (Magna Charta Universitatum, որն ընդունվել է եվրոպական համալսարանների ռեկտորների կողմից 1989թ. սեպտեմբերի 18-ին, Բոլոնիայի համալսարանի հիմնադրման 900-ամյակի տոնակատարության ժամանակ), ուղղված է եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ստեղծմանը՝ կրթության որակը գնահատելու և բարելավելու միջոցով:

2005թ. Հայաստանի Հանրապետությունը, միանալով Բոլոնյան գործընթացին, սկսեց ինտեգրվել եվրոպական միասնական կրթական համակարգին: Այդ գործընթացի վերջնարդյունքը պետք է լինի բարձրագույն կրթության բոլոր աստիճաններում(բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա և դոկտորանտուրա) եվրոպական համընդհանուր սկզբունքների ամրագրումն ու որակի ապահովումը:

Բուհի ռազմավարությունը բխում է ՀՀ օրենսդրությունից, ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարությունից, համալսարանի կանոնադրությունից և առաքելությունից:

Համալսարանի 2016-2020 թթ. ռազմավարական նպատակներն են.

- ինտեգրվել եվրոպական կրթական համակարգին,
- լինել համաշխարհային և ազգային կրթական համակարգի մաս կազմող, որակի ձևավորմանը նպաստող ուսումնական հաստատություն,
- պատրաստել XXI դարի հասարակության պահանջներին համապատասխանող որակյալ և մրցունակ մասնագետներ,
- ստեղծել նպաստավոր միջավայր անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, օրինապահ ու պատասխանատու քաղաքացու ձևավորման համար:

Առաջիկա տարիների համար որպես առաջնահերթ խնդիրներ են դիտարկվում. բարձրորակ կրթություն ապահովող, արդիական ՄԿԾ-ների ստեղծումը՝ գործող ՄԿԾ-ների բարելավման հիման վրա, որակյալ ծառայությունների տրամադրումը, որակի ներքին ապահովման համակարգի բարելավումն ու զարգացումը, ուսանողակենտրոն համակարգի ամրապնդումը, բուհի նյութատեխնիկական բազայի ամրապնդումը, ֆինանսական կայունության և կառավարման արդյունավետության բարձրացումը, ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականության իրականացումը, որակյալ կադրերով պրոֆեսորասասսախոսական կազմի համալրումը և նրանց որակավորման բարձրացումը, գիտահետազոտական գործունեության հետագա զարգացումը, բուհում բարոյահոգեբանական մթնոլորտի հետագա առողջացումը, հասարակության հետ կապերի ամրապնդումը, բուհի հասարակական պատասխանատվության բարձրացումը, բուհի միջազգային կապերի խորացումը:

1. Բարձրորակ կրթություն ապահովող, արդիական ՄԿԾ-ների ստեղծում՝ գործող ՄԿԾ-ների բարելավման հիման վրա, ինչին հասնելու համար անհրաժեշտ է.

- շարունակել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումների իրականացումը՝ էլնելով եվրոպական և ազգային չափանիշներից և աշխատաշուկայի կարիքներից,
- ՄԿԾ-ների վերջնարդյունքները առավելագույնս համապատասխանեցնել ՀՀ ՈԱՇ-ի նկարագրիչների պահանջներին,
- անցկացնել ՄԿԾ-ների բենչմարքինգ եվրոպական առաջավոր բուհերի հետ, լավագույն փորձը բուհի կրթական ծրագրերում ներառելու նպատակով,
- իրականացնել կրթական ծրագրերի փորձաքննություն՝ հիմնված դրանց մշտադիտարկման և պարբերական վերանայման ներքին չափանիշների, ընթացակարգերի վրա,
- կրթական վերջնարդյունքների իրականացումը դիտել կարևորագույն խնդիր, ապահովել ուսումնառողների կողմից բոլոր ՄԿԾ-ների վերջնարդյունքներում ինչպես գիտելիքների, այնպես էլ հմտությունների ու կարողությունների ձեռքբերումը,
- գնահատման բազմագործոն համակարգը դարձնել բաց, անկողմնակալ և կիրառման տեսակետից՝ պարզ ու հասկանալի,
- կատարելագործել գնահատման համակարգը՝ հիմք ընդունելով առարկաների առանձնահատկությունները, ակնկալվող ուսումնառության արդյունքները, որը հնարավորություն կտա գնահատել նաև ակնկալվող կարողություններն ու հմտությունները:

2. Որակյալ ծառայությունների տրամադրում

- Կատարելագործել և բազմազանեցնել գնահատման, դասավանդման, ուսումնառության մեթոդները, ուսումնասիրել և ներդնել արդիական մեթոդներ, կիրառել հետադարձ կապի

մեխանիզմներ՝ ուսումնառողների, գործատուների կարիքների վերհանման և համալսարանի կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացման նպատակով:

- Մշակել ուսանողի ուղեցույց, որտեղ ներառված կլինեն նաև ակադեմիական ազնվությանն առնչվող կանոնակարգային կարգավորումները:

3. Որակի ներքին ապահովման համակարգի բարելավում և զարգացում

- Համարել բուհի Որակի ապահովման կենտրոնի աշխատակազմը, վերանայել որակի ապահովման կառույցի աշխատակազմին ներկայացվող մասնագիտական պահանջները, կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ, ապահովել նրանց կողմից իրենց լիազորությունների կատարման համար անհրաժեշտ մասնագիտական կարողությունների տիրապետումն ու կիրառումը:

- Լրամշակել որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, համալսարանի կանոնակարգերը, ուղեցույցները՝ դրանք համապատասխանեցնելով ՈԱԱԿ-ի չափանիշներին ու չափորոշիչներին:

- Մշակել կրթության որակի ապահովման ձեռնարկ՝ իրականացնելով բենչմարքինգ նմանատիպ այլ բուհերի հետ:

- Մշակել համալսարանի և նրա «Շիրակացի» մասնաճյուղի որակի ներքին ապահովման համակարգի բարելավման ռազմավարություն՝ համալսարանի ընթացակարգերին և կառավարման կառույցների կանոնակարգերին համապատասխան:

- Բուհի ղեկավարության, ֆակուլտետների և բոլոր մյուս ստորաբաժանումների հետ համատեղ ընտրել որակի ապահովման պատասխանատուներ, նրանց համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ և ամբողջացնել որակի ներքին ապահովման միասնական համակարգը:

- Մշակել համալսարանի գործունեության հիմնական ոլորտների ինքնագնահատման չափանիշներ՝ հիմք ընդունելով եվրոպական հավատարմագրող կազմակերպությունների և ՈԱԱԿ-ի չափանիշներն ու չափորոշիչները:

- Ներդնել համալսարանի ուսումնական ու վարչական ստորաբաժանումների հաշվետվողականության համակարգ՝ կապված որակի ապահովման հարցում դրանցից յուրաքանչյուրի ունեցած դերակատարության հետ:

- Մեծացնել բուհի ստորաբաժանումների պատասխանատվությունը որակի ապահովման գործընթացների շարունակականության ապահովման և արդյունավետության բարձրացման առումով:

- Բարելավել բուհի պրոֆեսորասասախոսական և վարչական կազմի իրազեկվածությունը որակի ապահովմանը ներկայացվող պահանջների ու իրականացվող գործընթացների վերաբերյալ:
- Ստեղծել գործուն մեխանիզմներ ներքին և արտաքին շահակիցներին որակի ապահովման գործընթացներում մասնակից դարձնելու համար:
- Ընդլայնել ներքին շահակիցների ներգրավվածությունը համալսարանի որակի ապահովման գործընթացներում՝ միտված որակի մշակույթի ամրապնդմանն ու բարելավմանը:
- Վերանայել և սահմանել բուհի ստորաբաժանումների գործառույթների շրջանակը՝ դրանք դիտարկելով ՊԻՄԲ շրջափուլի իրականացման տեսանկյունից,
- Հստակեցնել բուհում կազմակերպվող հարցումների վերլուծության արդյունքների հրապարակման մեխանիզմները՝ ապահովելով հետադարձ կապի մեխանիզմների կատարելագործման ու բարելավման անընդհատությունը:
- Մշակել և ներդնել որակի ներքին ապահովման համակարգի գնահատման ու բարելավման մեխանիզմներ՝ հիմնվելով դրանց շարունակական բարելավման ու արդյունքների հուսալիության վրա:

4. Ուսանողակենտրոն համակարգի ամրապնդում

- Համալսարանում վերջնականորեն արմատավորել ուսանողակենտրոն կրթական համակարգը, կանոնավոր կիրառել հետադարձ կապի մեխանիզմներ, բացահայտել սովորողների կարիքները և ուսումնական գործընթացը կատարելագործելու միջոցով հասնել որակյալ կրթության ապահովման:
- Մշտապես հոգ տանել կրթական գործընթացների վերաբերյալ ուսանողների իրազեկվածության ապահովման մասին:
- Կրթական գործընթացը դարձնել բաց, թափանցիկ, հասկանալի բոլոր շահակիցների համար:

5. Բուհի նյութատեխնիկական բազայի ամրապնդում

- Բացել նոր լաբորատորիաներ, մասնագիտական կաբինետներ, եղած բազան վերազինել ժամանակակից սարքավորումներով:
- Համալսարանի գրադարանը համալրել ժամանակակից մասնագիտական գրականությամբ (հայերեն և օտար լեզուներով):
- Մշակել տեղեկատվության կառավարման քաղաքականություն՝ ներդնելով ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն կընձեռնի ապահովել արագ և թափանցիկ գործունեություն:
- Անընդհատ բարելավել տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարումը:

- Ժամանակակից չափորոշիչներին համապատասխան զարգացնել տեղեկատվական ռեսուրսները և բարձրացնել դրանց օգտագործման արդյունավետությունը:
- Մշակել և իրականացնել ռեսուրսախնայողության և առկա հնարավորությունների արդյունավետ օգտագործման քաղաքականություն:
- Մշակել ռեսուրսների և կրթական միջավայրի համապատասխանության գնահատման հստակ գործող մեխանիզմներ՝ հաշվի առնելով նաև ՊԻՄԲ շրջափուլի բոլոր բաղադրիչների արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը:

6. Բուհի ֆինանսական կայունության և կառավարման արդյունավետության բարձրացում

- Ակտիվացնել համալսարանի հասարակայնության հետ կապերի բաժնի, միջազգային կապերի վարչության, օտարերկրյա ներկայացուցչությունների, Գյումրու «Շիրակացի» մասնաճյուղի գործունեությունը բուհի ուսանողական համակազմի համալրման աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:
- Մեծացնել առկա ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը:
- Հայթայթել կրթաթոշակներ ՀՀ և արտերկրի գործարարների միջավայրից, հանրապետության մարզպետներից, քաղաքապետներից ստանալ աջակցություն սոցիալապես անապահով ուսանողների համար:
- Մասնակցել հնարավորինս շատ դրամաշնորհային ծրագրերի:
- Ավելացնել անվճար (բուհ-ի հաշվին) տեղերի քանակը:
- Հիմնել և շնորհել նոր անվանական կրթաթոշակներ:
- Հստակեցնել բուհի կառավարման ու վարչական ստորաբաժանումների գործունեությունը, բարձրացնել նրանց պատասխանատվությունը բուհի առաքելության իրականացման համար՝ հաշվի առնելով նաև ՊԻՄԲ շրջափուլի բոլոր բաղադրիչների արդյունավետ իրականացման հրամայականը:

7. Պրոֆեսորասաստական կազմի համայրում և որակավորման բարձրացում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան

1. Իրականացնել համալսարանի և Գյումրու «Շիրակացի» մասնաճյուղի դասախոսական անձնակազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատման գործընթացներ:
2. Ուսումնասիրել և տարածել առաջավոր փորձը, արմատավորել նորարարությունը:
3. Խրախուսել առաջավոր դասախոսներին, կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական վերապատրաստումներ, անգլերեն լեզվի դասընթացներ, ինչի արդյունքում կունենանք.

- a. անգլերեն լեզվով հաղորդակցվելու հմտության ձեռքբերում՝ դրանով իսկ մեծացնելով օտարերկրյա ուսանողների համակազմը բուհի կրթական ծրագրերում,
- b. տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետում,
- c. դասավանդման, ուսումնառության ու գնահատման ժամանակակից մեթոդների տիրապետում,
- d. մանկավարժական-հոգեբանական անհրաժեշտ հմտությունների ձեռքբերում,
- e. դասախոսների տարբերակված վարձատրում:

8. Գիտահետազոտական գործունեության հետագա զարգացում

- Մշակել համալսարանի՝ հետազոտության ոլորտի հետաքրքրություններն ու հավակնություններն արտացոլող քաղաքականություն:
- Գերակա գիտական ուղղություններում՝ ֆիտոթերապիայի և Հայաստանի դեղաբույսերի ոլորտներում ընդլայնել հետազոտական գործունեությունը, ավելացնել ուսանողների մասնակցությունը:
- Խորացնել «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ «ԱլտՄեդ» վերականգնողական և ավանդական բժշկության բաժանմունքի հետ համագործակցությունը, հաստատել նոր կապեր այլ համանման հաստատությունների հետ:
- Ակտիվացնել համալսարանի ամբիոններում տարվող գիտահետազոտական աշխատանքները, ընդլայնել դրանց մեջ ուսանողների մասնակցությունը:
- Նպաստել տնտեսագիտության ամբիոնում իրականացվող գիտահետազոտական ծրագրերի շարունակականությանը, դրանցում դասախոսների և ուսանողների մասնակցությանը:
- Խրախուսել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և երիտասարդ հետազոտողների ավելի ակտիվ ներգավումը գիտահետազոտական, ինչպես նաև գիտական գործունեության միջազգայնացմանն ուղղված աշխատանքներում:
- Խթանել գիտական հրապարակումները գրախոսվող և բարձր ազդեցության գործակից ունեցող միջազգային առաջատար գիտական պարբերականներում:
- Օժանդակել գիտական և ուսումնամեթոդական աշխատությունների հրատարակմանը, գիտական աստիճանների ու կոչումների ձեռքբերմանը:
- Ապահովել հետազոտության և ուսումնական գործընթացի կապը՝ նպաստելով ուսանողների քննադատական մտածողության զարգացմանը և հետազոտական աշխատանքներում ուսանողների ակտիվ ներգրավվածությանը:
- Ակտիվացնել ուսանողական գիտական ընկերության գործունեությունը:

- Բոլոր մասնագիտությունների գծով ընդլայնել լրացուցիչ կրթական ծրագրերով սովորողների քանակը, կյանքի կոչել հետազոտողի կրթական ծրագրերը՝ կազմակերպելով ասպիրանտուրայի ընդունելություն:

9.Բուհում բարոյահոգեբանական մթնոլորտի հետագա բարելավում

- Համալսարանում ապահովել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, հասնել էթիկայի կանոնների հավուր պատշաճի հարգման և պահպանման:
- Էթիկայի հանձնաժողովի կանոնակարգված գործունեության միջոցով հասնել բոլոր ծագող տարածայնությունների փոխընդունելի լուծումների:
- Ամրապնդել կոլեկտիվում ձևավորված համագործակցային հարաբերությունները, փոխադարձ հարգանքը՝ ի նպաստ որակի մշակույթի և բուհի առաջընթացի:

10.Հասարակության հետ կապերի ամրապնդում, բուհի հասարակական պատասխանատվության բարձրացում

- Կատարելագործել «Հայբուսակ» համալսարանի ինտերնետային կայքը և մատչելի դարձնել համալսարանի մասին տեղեկատվությունը:
- Բարձրացնել ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության մակարդակը, խորացնել համալսարանի համագործակցությունը ՀՀ Պաշտպանության նախարարության հետ «Ազգ-բանակ» հայեցակարգի շրջանակներում:
- Ընդլայնել հանրային միջոցառումների ցանկը, մասնակցությունն ու որակը:
- Պարբերաբար գնահատել հասարակական պատասխանատվության տեսանկյունից բուհի գործունեության արդյունավետությունը:

11. Բուհի միջազգային կապերի խորացում

- Մշակել բուհի միջազգայնացման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր՝ ելնելով համալսարանի առաքելությունից և ռազմավարական ծրագրից:
- Կազմել ծրագրեր՝ բուհի միջազգայնացման քաղաքականությունը կենսագործելու, միջազգային համագործակցությունն ընդլայնելու, կրթական գործընթացներում օտարազգի ուսանողների ներգրավվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:
- Խթանել կրթական, գիտական, մշակութային համագործակցությունը արտերկրի համալսարանների, գիտական, մշակութային հաստատությունների հետ:
- Ակտիվացնել տարբեր դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը, նպաստել ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությանը:
- Գնահատել համագործակցության պայմանագրերով ստանձնած գործառության պարտականությունների և իրականացրած միջոցառումների արդյունավետությունը՝ համագործակցության պայմանագրերի ոչ լիարժեք կատարման ռիսկերը նվազեցնելու համար:

Նշված նպատակների ձեռքբերումը բուհն ապահովում է կառավարման գործընթացների աստիճանական բարելավման, ներքին ու արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրման ճանապարհով: Դրան նպաստել է ՈԱԱԿ-ի հետ համագործակցությունը և ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված ինքնավերլուծությունը, որը թույլ տվեց բացահայտել հաստատության հնարավորությունները, ձեռքբերումները, վեր հանել ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները, վտանգները և պլանավորել բարեփոխումների հետագա քայլերը:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2.1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունը, միանալով Բոլոնյան գործընթացին, աշխատանք սկսեց՝ ՀՀ բարձրագույն կրթությունը եվրոպական միասնական կրթական համակարգին ինտեգրելու ուղղությամբ, որի վերջնարդյունքը պետք է լինի՝ կրթական բոլոր աստիճաններում (բակալավրիատ, մագիստրատուրա, անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագիր, ասպիրանտուրա և դոկտորանտուրա) այնպիսի որակի ամրագրումը, որպիսին ունի եվրոպական կրթական համակարգը: Հետևաբար՝ կրթության որակի ապահովման համակարգի ձևավորումը ժամանակի հրամայական է, ուստի բուհը որդեգրել է որակի ապահովման քաղաքականություն՝ արդի կրթական դաշտում ներդաշնակ գործելու և կրթական ծրագրերի ու շնորհվող որակավորումների համապատասխանության հասնելու համար: Այդ քաղաքականությունը բխում է բուհի առաքելությունից և պետք է նպաստի կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերմանը, ՈԵՇ-ի և ՈԱՇ-ի չափանիշների պահպանմանը՝ կառավարման արդյունավետության բարձրացման ճանապարհով: Իսկ քաղաքականության կենսագործման համար բուհում մշակվել են կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր:

Սահմանված նպատակներին հասնելու համար բուհում առկա է համապատասխան կրթական միջավայր՝ անհրաժեշտ ենթակառուցվածքներով և ռեսուրսներով:

ՈԱ քաղաքականությունը ուղղված է հետևյալ նպատակների իրականացմանը.

- որակի ապահովման համար անհրաժեշտ իրավանորմատիվային բազայի ստեղծում,
- որակի ներքին ապահովման համակարգի ստեղծում,
- մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանեցում որակի ապահովման պահանջներին, դրանց մշտադիտարկում և շարունակական բարելավում,
- բուհի բոլոր ստորաբաժանումների կանոնակարգերի և գործունեության վերակառուցում՝ որակի ապահովման խնդիրներից ելնելով, ինչը թույլ կտա բարձրացնել դրանցից յուրաքանչյուրի պատասխանատվությունը որակի բարելավման գործընթացներում,
- միջազգային չափանիշներին կրթության որակի համապատասխանությունը ապահովելու նպատակով՝ համալսարանի ուսումնական ու վարչական անձնակազմի համար վերապատրաստումների կազմակերպում և իրականացում,
- շարունակական բարելավումների միջոցով՝ որակի մշակույթի ձևավորում,

▪ միջազգային կրթական ասպարեզում Երևանի «Հայբուսակ» համալսարանի բարձր վարկանիշի և մրցունակության ապահովում:

Բուհն իր որակն ապահովում է՝ առաջնորդվելով սեփական առաքելությամբ, նպատակներով և ռազմավարական ծրագրով: Կրթության որակի ապահովումը հաստատությանը հնարավորություն է ընձեռում ուսումնառողներին տալ այնպիսի գիտելիքներ, որոնք համապատասխանում են աշխատաշուկայի պահանջներին, ապահովում են կրթական որակավորումների փոխադարձ ճանաչումը եվրոպական կրթական տարածքում և նպաստում ուսանողների, շրջանավարտների, դասախոսների միջազգային շարժունությանը:

Կրթության որակը բազմաչափ և բազմաբովանդակ հասկացություն է, այն ենթադրում է.

a) կրթական վերջնարդյունքների համապատասխանություն պետական չափորոշիչներին և Հայաստանի ու արտերկրի աշխատաշուկայի կարիքներին,

b) թողարկվող մասնագետների կարողունակությունների ապահովում:

Որակի ապահովումն ունի երկու չափում՝ արտաքին և ներքին:

ա/ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՂԱՆՈՎՈՒՄ

Որակի արտաքին ապահովումը կրթության որակի համապատասխանությունն է եվրոպական կրթական տարածքի պահանջներին, ինչպես նաև կրթության ոլորտում Հայաստանի քաղաքականությանը և ՀՀ բարձրագույն մասնագիտական պետական կրթական չափորոշիչներին: Որակի արտաքին ապահովման գործընթացներն ունեն երեք հիմնական նպատակ.

• *Թափանցիկություն:* Որակի ապահովման գործընթացները հրապարակային են դարձնում բուհի կրթական ծառայությունների իրականացումը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:

▪ *Վերահսկում:* Հաստատությունը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլև ցույց տալիս, որ առկա ռեսուրսները արդյունավետ օգտագործելով՝ հասնում է հնարավորինս բարձր որակի:

• *Որակի բարելավում:* Հաստատությունը ուսումնասիրում է միջազգային փորձը, քննարկում ու վերլուծում է որակի ապահովման գործընթացներում առկա խնդիրները և քայլեր ձեռնարկում դրանց հաղթահարման ուղղությամբ՝ ապահովելով բուհի շարունակական զարգացումը:

բ/ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Որակի ներքին ապահովումը պայմանավորված է բուհի առաքելությամբ, նպատակներով, կառավարման համակարգի հստակ ու ճկուն գործելակերպով, մասնագիտական կրթական ծրագրերի որակով, պրոֆեսորադասախոսական կազմի գիտական և կրթական մակարդակով, նյութատեխնիկական բազայով:

Որակի ներքին ապահովումը ենթադրում է հետևյալ քայլերի իրականացումը.


- առաքելության և նպատակների սահմանում,
- ՈԵՇ-ի և ՈԱՇ-ի չափանիշներին համապատասխան՝ ՄԿԾ-ների և առարկայական մոդուլների մշակում,
- կրթական ծրագրերի վերջնարդյունքների մշտադիտարկում, վերահսկում, գնահատում, բարելավում,
- բուհի ստորաբաժանումների լիազորությունների և պարտականությունների համապատասխանեցում որակի ապահովման պահանջներին, աշխատանքների հստակ պլանավորում, հաշվետվողականության ներդրում,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման շարունակական կատարելագործում, հետազոտական գործունեության ակտիվացում,
- ենթակառուցվածքների ու ռեսուրսների ապահովում և արդիականացում,
- ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորում,
- որակի ապահովման ներքին համակարգի և որակի մշակույթի ձևավորում:

2.2.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄՈՂԵԼԸ

Կրթության որակի ապահովման համար բուհը առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- որակի գերադասում բոլոր ցուցանիշներից,
- համաչափ զարգացում,
- որոշակիություն, հստակություն,
- չափելիություն, վերահսկելիություն,
- բուհի բոլոր ստորաբաժանումների ներգրավվածություն,
- հասանելիություն,
- իրագործելիություն,
- ժամանակի մեջ հստակ կանխորոշվածություն,
- զարգացման կայունություն,
- առավելագույն արդյունավետություն:

«Հայբուսակ» համալսարանի ՈԱ մոդելը կրթության բարեփոխումների, աշխատաշուկայի, հասարակության և եվրոպական կրթական տարածքի պահանջներին համապատասխան.



2.3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«Հայբուսակ» համալսարանի որակի ապահովման հիմնական չափանիշներն են.

- համալսարանի վարած քաղաքականության ու ծավալած գործունեության համապատասխանություն իր առաքելությանը,
- համալսարանի կառավարման համակարգի, վարչական կառույցների և դրանց գործառնման արդյունավետություն, որը միտված է հաստատության առաքելության և նպատակների իրականացմանը՝ պահպանելով էթիկայի նորմերը,
- ՄԿԾ-ների համապատասխանություն ՌԵՇ-ի և ՈԱՇ-ի պահանջներին, հաստատության առաքելությանը, ինչը նպաստում է ուսանողների և դասավանդողների շարժունությանը և միջազգայնացմանը,
- համալսարանի ապահովվածություն անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով,

- համալսարանի կողմից աջակցություն հետազոտական գործունեության իրականացմանը և ուսումնառության հետ դրա կապի ապահովմանը,
- անհրաժեշտ ուսումնական միջավայրի ստեղծման համար ռեսուրսների առկայություն(կաբինետներ, լսարաններ, լաբորատորիաներ, գրադարանային ֆոնդ, տեղեկատվական համակարգ և այլն),
- սովորողների մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների համապատասխանություն ՄԿԾ-ների վերջնարդյունքներին, ինչի շնորհիվ ապահովվում է նրանց պահանջվածությունը աշխատաշուկայում և հիմք հանդիսանում կրթության շարունակականության ապահովման համար,
- արտաքին կապերի միջոցով համալսարանի փորձի փոխանակում և զարգացում, որը նպաստում է հաստատության միջազգայնացմանը,
- համալսարանի որակի ապահովման ներքին համակարգի առկայություն, դրա գործունեության կանոնակարգում, ինչը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

2.4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Բուիը կրթության որակի բարձրացման նպատակով առաջնորդվում է ՈԱՇ- ի դրույթներով: 2008թ.-ից գործում է Կրթության որակի ապահովման կենտրոն (հետագայում՝ Կենտրոն), որն իրականացնում և վերահսկում է համալսարանում կրթական գործընթացի բարելավման և որակի բարձրացման աշխատանքները: Կենտրոնի նպատակները, խնդիրները, գործունեության ոլորտները, կառուցվածքն ու կառավարումը հստակ ձևակերպված են Կենտրոնի կարգում: Իր գործունեության ընթացքում Կենտրոնը կազմակերպել է մասնագիտությունների կրթական ծրագրերի, դասընթացների մոդուլների, ուսումնական պլանների վերամշակման աշխատանքների իրականացումը, վերապատրաստել է բուհի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և գործատուների շրջանում կազմակերպել և անցկացրել է հարցումներ, մշակել և ամփոփել դրանց արդյունքները:

Կենտրոնի գործունեության համար ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ՝ տրամադրվել է կահավորված տարածք՝ հազեցած ժամանակից տեխնիկայով: Կենտրոնում աշխատում են արտերկրում և ՀՀ-ում վերապատրաստված մասնագետներ:

Կենտրոնը ինքնակառավարվող մարմին է, նրա գործողությունները և որոշումները, վարչական և կառավարման մարմինների կողմից չեն ուղղորդվում և կառավարվում:

ՈԱ գործընթացներում որոշակի դերակատարություն է վերապահված ներքին և արտաքին շահակիցներին (ուսանողներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմ, շրջանավարտներ, ծնողներ, գործատուներ, արտաքին գնահատողներ, ԿԳՆ և այլն): Համալսարանի ուսանողների ներկայացուցիչները ներգրավված են համալսարանի ԳԽ-ում և ֆակուլտետների խորհուրդներում, ինչպես նաև համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացների աշխատանքային խմբի կազմում: Ուսանողները ակտիվորեն մասնակցում են համալսարանի կողմից իրականացվող տարաբնույթ հարցաշարերի մշակման և հարցումների անցկացման գործընթացներին:

Համալսարանի Գիտական խորհրդի կազմում ընդգրկված են արտաքին շահակիցներ: Բուհի ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցները ներգրավված են նաև որպես ավարտական ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների նախագահներ և անդամներ:

Համալսարանի ՈՆԱՀ-ը պարբերաբար վերանայվում և կատարելագործվում է: Կենտրոնը համագործակցում է բուհի բոլոր ստորաբաժանումների (գիտական խորհուրդ, դեկանատներ, ամբիոններ, կարիերայի կենտրոն, ՈԻԳԸ, ուսանողական պառլամենտ և այլն) հետ, վերապատրաստում նրանց, տրամադրում խորհրդատվություն, վերահսկում նրանց կողմից ՈԱ գործընթացների կատարումը: Բուհի ՈԱ-ի քաղաքականությունն ու գործընթացները մշակվել են՝ հիմք ընդունելով ՈԱԱԿ-ի, ԵՊՀ-ի, ԵՊԲՀ-ի, ԵՊՄՀ-ի, ՌԴ-ի և արտերկրի բուհերի որակի ապահովման քաղաքականության ու գործընթացների համապատասխան փաստաթղթերը:

2.5. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Որակի ապահովման կենտրոնում աշխատում են արտերկրում և Հայաստանում մասնագիտական վերապատրաստումներ անցած արհեստավարժ մասնագետներ:

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի որակի ապահովման կենտրոնը իրականացնում և համակարգում է կրթական գործընթացի բարելավման և որակի բարձրացման աշխատանքները: Այն նպատակ ունի բարձրացնել ուսուցման արդյունավետությունը և կրթության որակը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին: Իր գործունեության ժամանակահատվածում ՈԱԿ-ը մեծապես նպաստել է Բոլոնիայի գործընթացի ներդրմանը համալսարանում: Մասնավորապես, կատարվել են հետևյալ աշխատանքները՝

✓ համալսարանի վարչական աշխատակազմի վերապատրաստումը, որի ընթացքում անց են կացվել հարցումներ՝ թե որքանով են պատկերացնում աշխատակիցները Բոլոնիայի գործընթացի առանձնահատկությունները, ինչպես են ծրագրում իրականացնել Բոլոնիայի պահանջները, ինչպիսի խնդիրներ են տեսնում իրենց գործունեության մեջ: Դրանց հիման վրա ձևավորվել են Կենտրոնի գործունեության հետևյալ ուղղությունները.

- վերապատրաստել բուհի պրոֆեսորադասախոսական կազմն՝ ըստ Բոլոնիայի պահանջների,
- համապատասխանեցնել ՄԿԾ-ները և առարկայական նկարագրերը՝ միջազգային չափանիշներին,
- մանկավարժներին զինել ժամանակակից դասավանդման մեթոդներով և տեխնոլոգիաներով,
- հստակեցնել և կոնկրետացնել ուսուցման նպատակները՝ դասապրոցեսն ավելի արդյունավետ դարձնելու համար,
- բարձրացնել լսարանում ծախսվող ժամանակի արդյունավետությունը՝ այն օգտագործելով ի շահ ուսանողի:

✓ Վերապատրաստումների ընթացքում բուհի աշխատակիցները և պրոֆեսորադասախոսական անձնակազմը.

- ծանոթացել են Բոլոնիայի գործընթացի պահանջներին,
- ստացել են բոլոր միջազգային և հանրապետական համապատասխան կառույցների կողմից ստեղծված փաստաթղթերը,
- ներգրավվել են ինտերակտիվ թրենինգներին, որոնց միջոցով իրականացվել է աշխատանքների առաջին փուլը:

✓ Հաջորդ փուլում սկսվել են կրեդիտային համակարգի մշակման և ներդրման աշխատանքները համալսարանում, որի համար ևս իրականացվել են վերապատրաստումներ և ձեռնարկվել նոր, կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան ուսումնական պլանների ստեղծումը: Վերանայվել են բուհում գործող առարկայական ծրագրերը, ինչի համար ստեղծվել և բոլոր ամբիոններին է տրամադրվել միջազգային չափանիշներին համապատասխանող, արդյունավետ առարկայան ծրագրերի մշակման ձևաչի: Արդյունքում՝ համալսարանում դասավանդվող բոլոր առարկայական ծրագրերը հիմնականում համապատասխանում են ներկայացվող պահանջներին: Չնայած դրան, համալսարանում մշտապես իրականացվում է ուսումնական պլանների, ՄԿԾ-ների, դասընթացների/մոդուլների նկարագրերի, կրթական չափորոշիչների պարբերական

վերանայում և կատարելագործում՝ դրանք միջազգային չափանիշներին և տեղի կրթական խնդիրներին շարունակաբար համապատասխանեցնելու նպատակով:

✓ Համալսարանում ուսուցման որակի բարձրացման նպատակով մշտապես իրականացվում են մանկավարժական գործընթացի դիտարկում և դասալսումներ, արդյունքների քննարկում ամբիոնների, դեկանատների, ֆակուլտետների խորհուրդների, ռեկտորատի, Կենտրոնի և բուհի գիտական խորհրդի կողմից:

✓ Կրթության որակի ուսումնասիրության նպատակով անց են կացվում հարցումներ ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, գործատուների շրջանում՝ վերհանվում են բոլոր շահակիցների կարիքները և ցանկությունները, որոնց վերլուծության հիման վրա հստակեցվում են համալսարանի արդի խնդիրները և պլանավորվում՝ կատարվելիք աշխատանքները :

- Ուսուցման որակի բարձրացման նպատակով ևս իրականացվել են բուհի դասախոսների վերապատրաստումներ, դասախոսները ծանոթացել են ուսուցման ժամանակակից պահանջներին, նոր մեթոդներին և տեխնոլոգիաներին: ՈԱԿ-ը առաջարկել է ուսուցման ավանդական թելադրություն-դասախոսություն ձևը փոխարինել իր կողմից մշակված մի շարք նոր մեթոդներով, որոնց մեծ մասն այժմ հաջողությամբ կիրառվում է բուհի մասնագետների կողմից, օրինակ՝ էլ. ծրագրեր, online դասընթացներ:

- Ուսուցման նոր ձևերի ներդրման նպատակով դասախոսներին առաջարկվել է մշակել, իսկ եթե ունեն մշակված՝ գրի առնել իրենց հեղինակային դասընթացները և տրամադրել ուսանողներին կամ էլեկտրոնային տեսքով, կամ թղթի վրա: Բացի այդ, առաջարկվել է համալսարանի ծախսերով տպագրել այդ դասընթացները, իսկ հեղինակներին՝ վարձատրել:

✓ Ուսուցման նոր ձևերին և տեխնոլոգիաներին ծանոթանալու, դրանք համալսարանում ներդնելու նպատակով բուհի մի խումբ աշխատակիցներ 2009 թվականից ընդգրկվել են “Institution Building and Human Resource Deveelopment for eLearning in the Caucasus” ծրագրում, որը Հայաստանում և Անդրկովկասի այլ երկրներում կազմակերպել էր Գերմանական Inwent Capacity Building International(Federal Ministry for Economic Cooperation, Germany) կազմակերպությունը, իսկ աշխատանքները իրականացնում էին ավստրիական Global Campus կազմակերպության մասնագետները:

✓ 2011-2012 թվականների ընթացքում ՈԱԿ-ի կողմից ուսումնասիրվել են ուսուցման արդյունքների գնահատման եվրոպական չափանիշները և մշակվել է գնահատման նոր համակարգ, որը հաշվի է առնում նախկինում անտեսված մի շարք գործոններ, ինչպիսիք են, օրինակ՝ ուսանողի ակտիվությունը դասապրոցեսի ժամանակ, նրա ինքնուրույն, ստեղծագործական և արտալսարանային աշխատանքը, հաճախումները և այլն: Օբյեկտիվ և թափան-

ցիկ գնահատման համակարգի ներդրման նպատակով իրականացվել են բուհի վարչակազմի և բոլոր դասխոսների վերապատրաստումներ, որոնց ընթացքում ներկայացվել է ուսուցման արդյունքների գնահատման նոր համակարգը, տրամադրվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (թափանցիկ և օբյեկտիվ գնահատման սանդղակ և գնահատման եվրոպական չափորոշիչներ՝ ուսանողների համար, ուսուցման արդյունքների ստուգման ձևերի ցանկ՝ ամբիոնների համար, տեղեկագրերի և ամփոփիչ գնահատականների սանդղակներ՝ դեկանատների համար և ներքին շրջանառության այլ փաստաթղթեր), կատարվել է բացատրական աշխատանք՝ գնահատման նոր համակարգի ներդրման արդյունավետության և անհրաժեշտության ուղղությամբ: Գնահատման համակարգի արդյունավետության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքում՝ 2016 թ. ՈԱԿ-ի կողմից այն վերանայվել է:

✓ Ձևավորվել է համագործակցություն ՀՀ և արտերկրի մի շարք բուհերի հետ, որոնց թվում են Իսպանիայի Մենեջմենթի Բարձրագույն Դպրոցը, Էստոնիայի “Tallinn Health Care College”-ը:

Համալսարանը ակտիվորեն մասնակցում է միջազգային կազմակերպությունների ծրագրերում.

- Վերջին նվաճումներից է բրիտանական Տիրի հասարակական կազմակերպության հետ կնքած պայմանագիրը, ըստ որի՝ այդ կազմակերպությունը ուսումնական պլաններ և առարկայական ծրագրեր է տրամադրելու «Հայբուսակ» համալսարանին, ինչպես նաև հանձն է առնելու վերապատրաստել տարեկան մի քանի դասախոսների, ուսանողներին հրավիրելու է իր կողմից կազմակերպված թրենինգներին ու միջոցառումներին:
- Համալսարանի իրավագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետը համագործակցում է ՄԱԿ-ի գրասենյակի հետ, որի արդյունքում հիմնադրվել և գործում է Իրավաբանական կլինիկա:
- «Հայբուսակ» համալսարանը ԱՊՀ տարածքում միակ բուհն է, որ Հայ-Կանադական առևտրային պալատի անդամ է :
- Գործում են համագործակցության պայմանագրեր՝ Ինֆորմատիկացիայի Միջազգային Ակադեմիայի (Կանադա), Իսպանիայի բիզնեսի և հաղորդակցման դպրոցի, Հոլանդիայի Դելտա համալսարանի, Նյուրնբերգի Միջազգային Բիզնեսի դպրոցի, իսպանական Էլ Արկա մշակութային-կրթական կազմակերպության, Էստոնիայի “Tallinn Health Care College”-ի և այլ համալսարանների հետ:
- Ըստ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան հետ ձեռք բերված պայմանավորվածության՝ ամեն տարի համալսարանի մի քանի ուսանողներ(որոնց ընտրում է ԻԻՀ դեսպանատունը) մեկնում են Իրան ուսումնառության՝ Իրանի

դեսպանատան կրթաթոշակով: ԻԻՀ դեսպանատան կողմից համալսարանում ստեղծվել է ժամանակակից տեխնիկայով կահավորված իրանագիտության կաբինետ:

• Համաձայն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանատան հետ ձեռք բերված պայմանավորվածության՝ ամեն տարի համալսարանի մեկ ուսանող հնարավորություն ունի մեկնել Չինաստան ուսումնառության՝ ՉԺՀ դեսպանատան կրթաթոշակով:

• Համալսարանի մի շարք դասախոսներ ներգրավված են միջազգային ծրագրերում և դասավանդում ու գիտական հետազոտություններ են իրականացնում արտերկրում:

• Գործում են ներկայացուցչություններ՝ Իսպանիայում, Ռուսաստանում, Վրաստանում:

• Հայբուսակ համալսարանը բազմիցս մասնակցել է կրթությանը նվիրված միջազգային և հանրապետական ցուցահանդեսներին:

• Համալսարանը, Erasmus+ programme” ծրագրի շրջանակներում, մասնակցել է երեք դրամաշնորհային ծրագրերի.

1. Credit Mobility (Էստոնիայի “Tallinn Health Care College”-ի հետ համագործակցություն),
2. Jean Monnet Project (The transformation of the European Gender Ideology in Armenia: Developments and Challenges),
3. Erasmus Mundus Medea (բժշկական մասնագիտությամբ մագիստրատուրայում սովորող ուսանողների շրջանակում):

Որակի ապահովման կենտրոնը շարունակում է իր աշխատանքը կրթության որակը բարելավելու ուղղությամբ՝ ներգրավելով ներքին և արտաքին շահակիցներին:

2.6. ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՆԳԱՅՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մշակութային փոփոխությունների որակի բարձր սանդղակ ունենալու համար հարկավոր է բավականին ժամանակ: Հստակ միտում է նկատվել, որ մի կողմից՝ մասնավոր բուհերը, չդիմանալով մրցակցությանը, փակվում են, իսկ մյուս կողմից՝ այն բուհերը, որոնք ունեն զարգացման խնդիր, տեսնելով «Հայբուսակ» համալսարանի մեջ մեծ ներուժ, միավորվել են:

Բուհի զարգացման կարևորագույն նպատակներն են՝

- ինտեգրվել եվրոպական համակարգին,
- ստեղծել ուսանողակենտրոն կրթական միջավայր,
- մշտապես բարելավել կրթական ծրագրերը՝ հիմնվելով դրանց մոնիթորինգի վրա,
- բարձրացնել պրոֆեսորադասիստական կազմի որակավորումը, խրախուսել գիտահետազոտական գործունեությունը,

- ստեղծել նպաստավոր միջավայր՝ անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, օրինապահ ու պատասխանատու քաղաքացու ձևավորման համար,
- զարգացնել ու խորացնել միջազգային կապերն ու համագործակցությունը,
- կատարելագործել ուսանողների գնահատման համակարգը՝ համապատասխանեցնելով ժամանակակից պահանջներին,
- կանոնակարգել բուհի փաստաթղթային բազան,
- զարգացնել բուհի գործունեության SWOT վերլուծության վրա հիմնված ռազմավարական մտածելակերպ,
- վերապատրաստել ղեկավար անձնակազմը,
- պատրաստել XXI դարի հասարակության պահանջներին համապատասխանող որակյալ մասնագետներ,
- բավարարել շահակիցների պահանջները,
- ձևավորել որակի մշակույթ:

2.7.ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Երևանի «Հայբուսակ» համալսարանը պետական հավատարմագիր է ստացել դեռևս 2001թ.: Սակայն ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի որոշմամբ ընդունվել է ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման նոր կարգը, որի համաձայն ՀՀ բոլոր բուհերը (պետական և ոչ պետական) պետք է մինչև 2018թ. վերջը անցնեն ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրում, որի արդյունքում հավատարմագրվում են ոչ թե առանձին մասնագիտություններ, այլ բուհը:

Ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթացը կազմակերպում և իրականացնում է ՈԱԱԿ-ը, որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 27-ի որոշմամբ: Այդ գործընթացին մասնակցում են միջազգային փորձագետներ, քանի որ ենթակառուցվածքային հավատարմագրման հիմնական խնդիրն է համապատասխանեցնել ՀՀ բուհերի կառուցվածքը, գործունեությունը, մասնագիտությունների կրթական ծրագրերը միջազգային չափանիշներին և չափորոշիչներին:

Երևանի «Հայբուսակ» համալսարանը սկսել է միջազգային ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որը այսօր բուհի ամենակարևոր խնդիրներից է : 2010 թվականից համալսարանը հաջողությամբ մասնակցել է հավատարմագրման նախապատրաստական պիլոտային ծրագրին, որտեղ ընդգրկված էին ՀՀ 4 պետական և 2 մասնավոր բուհեր:

Ենթակառուցվածքային հավատարմագրում իրականացնելու կարևորագույն պայմանն է բուհի կողմից ինքնավերլուծության իրականացումը: Ինքնավերլուծությունը կատարվում է համաձայն ՈԱԱԿ-ի մշակած կարգի: Համապարփակ ինքնավերլուծությունը ենթադրում է 10 հիմնական ուղղություններ՝

1. առաքելություն և նպատակներ,
2. կառավարում և վարչարարություն,
3. մասնագիտության կրթական ծրագրեր,
4. ուսանողներ,
5. պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ,
6. հետազոտություն և զարգացում,
7. ենթակառուցվածքներ և ռեսուրսներ,
8. հասարակական պատասխանատվություն,
9. արտաքին կապեր և միջազգայնացում,
10. որակի ներքին ապահովման համակարգ:

Այս ուղղություններից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը և առկա վիճակի գնահատումը կատարվում են որոշակի չափորոշիչների հիման վրա: Դա թույլ է տալիս վեր հանել ձեռքբերումները, հնարավորությունները, թերություններն ու վտանգները և մշակել համապատասխան գործողությունների ծրագիր՝ միտված որակի բարելավմանը, ինչպես առանձին ուղղության, այնպես էլ ողջ համակարգի համար: Ինքնավերլուծության իրականացումը, ինչպես համալսարանի, այնպես էլ ՀՀ մյուս բուհերի համար, առաջին անգամ կատարվող գործընթաց է, որը թույլ կտա մեկ քայլ առաջ կատարել դեպի եվրոպական բարձրագույն կրթական տարածք, համապատասխանեցնել բուհի գործունեությունը այդ տարածքի պահանջներին՝ վերանայելով համալսարանի կրթական ծրագրերը, դասավանդման և ուսումնառության մոտեցումները, զարգացնելով նյութատեխնիկական բազան, վերապատրաստելով պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմը, ընդլայնելով գիտահետազոտական գործունեությունը, սերտ կապ և համագործակցություն հաստատելով ներքին ու արտաքին շահակիցների հետ, մի խոսքով՝ սկսել բարեփոխումների գործընթացներ բուհի գործունեության բոլոր ուղղություններով՝ առաջավոր եվրոպական բուհերի հետ համաքայլ ընթանալու և կրթության որակի մշակույթ ձևավորելու նպատակով:

ԳԼՈՒԽ 3

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

3.1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ, ՄՇԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ⁴

Համալսարանի ՄԿԾ-ներն ու դասընթացների մոդուլները փոխկապակցված ծրագրային փաթեթներ են, որոնց իրականացման արդյունքում՝ բուհը պատրաստում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողունակությունների տիրապետող բարձրագույն կրթությամբ մասնագետներ: ՄԿԾ-ներն ու դասընթացների մոդուլները ստեղծվում են՝ ելնելով հետևյալ սկզբունքներից՝

- գիտականություն,
- տրամաբանական միասնություն, հակասությունների բացակայություն,
- պարզություն, հստակություն,
- իրագործելիություն,
- ամբողջականություն:

ՄԿԾ-ՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

ՄԿԾ-ները պետք է .

1. լինեն ՈԱՇ-ին և բուհի առաքելությանը համահունչ,
2. թույլ տան ապահովել սահմանված վերջնարդյունքները,
3. ներառեն բոլոր դասընթացների մոդուլների ուսումնական վերջնարդյունքները,
4. պարունակեն նախանշված խնդիրների լուծման ուղիները,
5. ներառեն գիտելիքների, կարողությունների և հմտությունների չափանիշները՝ ըստ ՈԱՇ-ի և ECTS-ի պահանջների,
6. ներկայացնեն դասավանդման ուսումնառության ձևերը (լսարանային, արտալսարանային, պրակտիկաներ, հետազոտական և այլ),
7. պարունակեն պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջները,
8. պարունակեն իրագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, ռեսուրսները, տեղեկատվական աղբյուրները,

⁴ Համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերի, դասընթացների մոդուլների մշակման, հաստատման, մշտադիտարկման և պարբերական վերանայման կարգը հաստատված է ռեկտորի կողմից 04.05.2016թ.

9. ներառեն ուսանողին ներկայացվող պահանջները,
 10. նախատեսեն արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը ՄԿԾ մշակման, հաստատման, մշտադիտարկման, բարելավման գործընթացներին:
- ՄԿԾ-ն պետք է պարունակի՝
1. ծրագրի անվանումը,
 2. ՈԱՇ-ի մակարդակը, շնորհվող որակավորումը(օրինակ՝ բակալավր, մագիստրոս, հետազոտող),
 3. դասընթացի տևողությունը՝ տարի , կիսամյակ,
 4. ԵԿՓԿ (ECTS) կրեդիտների քանակը,
 5. ֆակուլտետը, որտեղ նախատեսվում է իրականացնել ՄԿԾ-ն,
 6. արտոնագրի առկայությունը,
 7. դիմորդի կրթական մակարդակին ներկայացվող պահանջները, ընդունելության պայմանները,
 8. կրթական ծրագրի կառուցվածքն ու համառոտ նկարագիրը , նպատակներն ու խնդիրները, նախանշված վերջնարդյունքները,
 9. մատուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար և այլն),
 10. ուսանողների գնահատման սկզբունքները, մեթոդները, ձևերը և կարգը,
 11. շրջանավարտների պահանջարկը աշխատաշուկայում, նրանց աշխատանքային հեռանկարները, մասնագիտական գործունեության ոլորտները,
 12. շարունակական կրթական հնարավորությունները,
 13. ՄԿԾ ուսումնական պլանը,
 14. ՄԿԾ հիմնական դասընթացները (մոդուլները) և դրանց նպատակները,
 15. ՄԿԾ հիմնական մոդուլների վերջնարդյունքների քարտեզը:
- Հնարավորության դեպքում ցանկալի է, որ ՄԿԾ-ները ընդգրկեն ՄԿԾ-ի ռիսկային /SWOT վերլուծությունը :

3.2. ՄԿԾ-ՆԵՐՒ ՄՇԱԿՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ԵՀՀ-ն ապահովում է իր ՄԿԾ-ների որակը՝ դրանց մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման քաղաքականության միջոցով: Դա թույլ է տալիս շարունակաբար բարելավել կրթության որակը և ապահովել ՄԿԾ-ների համապատասխանությունը աշխատաշուկայի կարիքներին: ՄԿԾ-ների որակի ապահովման ընթացակարգերի և ուղենիշների նպատակն է ապահովել, որ բոլոր ՄԿԾ-ները՝

- համապատասխանեն ՈԱԱԿ-ի ուղենիշներին և չափանիշներին, ինչպես նաև կրե-դիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ԵԿՓԿ) չափանիշներին,
- ՄԿԾ-ները համապատասխանեն ՈԱՇ-ի կողմից սահմանված աստիճանների պահանջներին,
- համահունչ լինեն բուհի առաքելությանը և ռազմավարությանը,
- համապատասխանեն լավ կառավարման, թափանցիկության և հաշվետվողակա-նության չափանիշներին,
- ունենան հստակ սահմանված ուսումնական վերջնարդյունքներ,
- աջակցեն ուսանողներին՝ հասնելու իրենց ուսումնական վերջնարդ-յունքներին,
- նպաստեն ՄԿԾ-ի որակի ապահովման գործընթացում ուսանողների ներ-գրավվածությանը:

*ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ*

ՄԿԾ-ների՝ որակի ապահովման ընթացակարգերի նպատակներն են՝

- համապատասխանություն ՈԵՇ-ի, ՈԱՇ-ի պահանջներին, ECTS-ի չափանիշներին,
- բուհի առաքելության և ռազմավարության իրագործում,
- ՄԿԾ-ի՝ որակի ապահովման գործընթացներում բոլոր շահակիցների մասնակցության խրախուսում:

*ՆՈՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ*

Նոր ՄԿԾ-ների առաջարկների մշակման ընթացակարգերն են.

- առաջարկները կարող են լինել տարբեր աղբյուրներից (գիտական խորհուրդ, ամբիոն-ներ, մեթոդական խորհուրդ, պրոֆեսորադասախոսական անձնակազմ, ուսանողներ, միջազգային և տեղական աշխատաշուկա և գործատուներ): Կարող են առաջարկվել նոր ՄԿԾ-ներ, գործող ՄԿԾ-ներում փոփոխություններ կամ դրանց դադարեցում,
- առաջարկներ կատարելիս պետք է առաջնորդվել բուհում գործող կանոնակարգերով,
- առաջարկները նախնական քննարկման են դրվում ամբիոններում, ապա՝ դրական եզրակացությամբ հարցը ներկայացվում է գիտխորհրդի քննարկման,
- գիտխորհրդի որոշման հիման վրա՝ առաջարկողները մշակում են ՄԿԾ նախագիծը և ներկայացնում ՈԱԿ, իսկ վերջինս՝ գիտխորհրդի նիստին, գիտխորհրդի երաշխավորումից հետո նախագիծը ուղարկվում է մեթոդական խորհրդի քննությանը, որն ուսումնասիրում և

ստուգում է դրա համապատասխանությունը՝ համալսարանի առաքելությանը և ռազմավարական նպատակներին,

- մեթոդական խորհրդի դրական եզրակացության հիման վրա՝ գիտխորհուրդը ձևավորում է ՄԿԾ մշակող մասնագիտական աշխատանքային խումբ, որը լրամշակում է նախագիծը և նոր ՄԿԾ-ն՝ ներկայացնում մեթոդական խորհուրդ,

- մեթոդական խորհուրդը ՄԿԾ-ի վերջնական տարբերակը ուղարկում է փորձաքննության և փորձագետների եզրակացությամբ հանդերձ՝ ներկայացնում գիտխորհրդի հաստատման,

- փորձագետները պետք է ունենան համապատասխան որակավորումներ՝ առնվազն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և 3 տարվա աշխատանքային փորձ՝ տվյալ ոլորտում,

- փորձագետները պետք է լինեն դրսից՝ այլ բուհերից և գիտահետազոտական հաստատություններից:

- փորձագետների թիվը սահմանում է մեթոդական խորհուրդը:

ՆՈՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Նոր ՄԿԾ-ները պետք է .

- կազմված լինեն ՄԿԾ-ների ստեղծման մասին՝ ՈԱՇ-ի և ներբուհական կանոնների համապատասխան,

- արտացոլեն աշխատաշուկայի պահանջները,

- պարունակեն ՄԿԾ-ի նպատակների և խնդիրների, ուսումնական պլանի, վերջնարդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդաբանության, գնահատման չափաձևի ու գործիքների և ուսանողների արդար ու համապատասխան գնահատման միջոցների վերաբերյալ փաստաթղթերը:

ՄԿԾ-ի գնահատման գործընթացին արտաքին փորձագետների մասնակցությունը, պարտադիր է:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Մասնագիտական կրթական ծրագրերի մշակման գործընթացի մասնակիցներն են.

1. Առաջարկողներ,
2. ՄԿԾ-ն մշակող մասնագետներ,
3. Մասնագիտական ամբիոն/ֆակուլտետի ղեկան,
4. Մեթոդական խորհուրդ,

5. Արտաքին փորձագետներ,
6. Կրթության որակի ապահովման կենտրոն,
7. Գիտխորհուրդ:

ՆՈՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ՄՈՂՈՒԼՆԵՐԻ)

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Նոր ՄԿԾ-ի առաջարկները հիմնվում են աշխատաշուկայի պահանջների վրա, նպաստում են շրջանավարտների կարիերային և ուսանողների հետագա կրթական հնարավորությունների ընդլայնմանը:

Նոր ՄԿԾ-ներ/դասընթացների մոդուլներ ներդնելու և զարգացնելու վերաբերյալ առաջարկներ կարող են ներկայացվել աշխատաշուկայից, առանձին աշխատակիցներից, կոլեկտիվ որոշումների հիման վրա կամ ուսանողներից: Քննության կարող են վերցվել նոր ՄԿԾ-ների և առկա ՄԿԾ-ներում փոփոխությունների մասին առաջարկներ: Առաջարկները կարող են դիտարկվել՝ համաձայն համալսարանի առաքելության և ռազմավարության նպատակների: Համալսարանի գիտխորհրդի, մեթոդական խորհրդի, ֆակուլտետների խորհուրդների և ամբիոնների նիստերի ժամանակ կարող են առաջ քաշվել նոր ՄԿԾ-ների մշակման, և առկա ՄԿԾ-ներում փոփոխություններ իրականացնելու առաջարկներ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

- Համալսարանի Կրթության որակի ապահովման կենտրոնը վերահսկում է առաջարկվող ՄԿԾ-ի /դասընթացի մոդուլի մշակման ողջ գործընթացը: Աշխատանքային խումբը ստանում է համակարգողի կարգավիճակ և սկսում նոր ՄԿԾ-ի մշակման և հաստատման գործընթացը՝ համալսարանի պահանջներին համապատասխան:

- Որակի ապահովման կենտրոնը պարբերաբար վերահսկում է ՄԿԾ-ի մշակման աշխատանքային խմբի գործունեության բոլոր քայլերը:

- ՄԿԾ-ի նախագիծը, ամբիոնի և համապատասխան ֆակուլտետի խորհրդի կողմից հաստատվելուց հետո, ներկայացվում է Կրթության որակի ապահովման կենտրոն, որն էլ իր հերթին այն ներկայացնում է գիտխորհուրդ՝ հետագա քայլերի համար:

- Համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, գիտխորհրդի երաշխավորումից հետո, առաջարկը տրվում է մեթոդական խորհրդի քննությանը: Վերջինս ուսումնասիրում է առաջարկը՝ համաձայն բուհի առաքելության, ՈԱՇ-ի և աշխատաշուկայի պահանջների: Մեթոդական խորհուրդը, առաջարկի գնահատման համար, ներգրավում է արտաքին փորձագետների՝ առնվազն երկու հոգու, ովքեր ներկայացնում են կարծիքներ՝ ՄԿԾ-ի մասին:

• Եթե առկա են շտկման ենթակա էական խնդիրներ, փաստաթուղթը ներկայացվում է լրամշակման, ապա՝ գիտխորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՔԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Արտաքին փորձագետը պետք է լավ իրազեկված լինի ՄԿԾ-ի մշակման պահանջներին և.

1. ունենա համապատասխան մասնագիտական որակավորում՝ առնվազն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան,
2. ունենա գիտության և/կամ կրթության բնագավառում առնվազն երեք տարվա փորձառություն,
3. համալսարանի հետ կապված շահեր չհետապնդի՝ առավելագույն օբյեկտիվություն ապահովելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Արտաքին փորձագետներին ամբիոնների առաջարկությամբ ընտրում և նշանակում է գիտական խորհուրդը :

1. Համալսարանը թեկնածուներին ընտրում է Հայաստանի Հանրապետության և/կամ արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ գիտական հաստատությունների աշխատակիցներից:

2. Համալսարանի և տվյալ հաստատությունների միջև ՄԿԾ-ների փոխադարձ փորձաքննությունների իրականացումն անընդունելի է:

3. Արտաքին փորձագետների վրա ճնշումներն անթույլատրելի են:

Բուհը արտաքին փորձագետի հետ կնքում է պայմանագիր, որում նշված են.

- աշխատանքի նկարագրությունը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
- աշխատանքի կատարման ժամկետները,
- սահմանված վարձավճարի չափը,
- պայմանագրի լուծարման կամ խզման ընթացակարգը:

ԱՐՏԱՔԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Արտաքին փորձագետները իրենց գործունեությունն իրականացնում են բուհի հետ կնքված պայմանագրի հիման վրա: Իրենց իրականացրած աշխատանքների վերաբերյալ նրանք ներկայացնում են գրավոր հաշվետվություն:

Արտաքին փորձագետի գործառույթներն են՝

- ստուգել ՄԿԾ-ի համապատասխանությունը ուսումնական վերջնաբոլորներին, ՈԱՇ-ի պահանջներին և համեմատել այլ համալսարանների համանման ՄԿԾ-ների հետ,
- ուսումնասիրել ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ

ռեսուրսների ու ենթակառուցվածքների առկայությունը,

- ուսումնասիրել ուսումնական պլանի գործընթացները, դասավանդման և ուսումնառության ձևերի համապատասխանությունը կրթական վերջնարդյունքներին,

- գնահատել ՄԿԾ հանրային պահանջվածությունը:

3.3. ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Որակի ապահովման և ՄԿԾ-ների կանոնավոր բարելավում իրականացնելու համար բուհի յուրաքանչյուր ՄԿԾ-ի ղեկավար(ամբիոնի վարիչ կամ ղեկան) պատրաստում և ՈԱԿ և գիտխորհուրդ է ներկայացնում տարեկան մշտադիտարկման զեկույց նախորդ ուստարում ծրագրի իրականացման ընթացքի մասին: Մշտադիտարկման նպատակներն են՝

- պարզել, թե նախորդ տարվա հաշվետվության մեջ նկատված թերությունները որքանով են հաղթահարված,

- գնահատել ծրագրի արդյունավետությունը, ուսումնական ռեսուրսները, ՄԿԾ-ի կառավարումը և վարչարարությունը,

- հետևել ծրագրի նպատակների ձեռքբերմանը,

- արձագանքել արտաքին և ներքին շահակիցներից ստացված առաջարկներին ու ցանկություններին,

- մշակել որակի ապահովման և բարելավման գործողությունների պլան և հետամուտ լինել դրա իրականացմանը:

ՏԱՐԵԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ուսումնական տարվա վերջում ՄԿԾ-ի ղեկավարի(ղեկան կամ ամբիոնի վարիչ) կողմից կազմվում է տարեկան մշտադիտարկման զեկույց, որի հիման վրա ՄԿԾ-ում կատարվում են փոփոխություններ՝ մինչև հաջորդ ուսումնական տարվա սկիզբը:

Հաշվետվությունը կազմվում է ՄԿԾ-ի որակի բարելավման նկատառումներից ելնելով՝ հաշվի առնելով բոլոր շահակիցների կարծիքները, որոնք արտացոլված են ուսանողների, շրջանավարտների, գործատուների, դասախոսների հարցումների արդյունքներում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում: Բացի այդ՝ կարող են օգտագործվել նաև ուսանողների հաճախումների վերաբերյալ տվյալները, քննությունների արդյունքները, առաջադիմության ցուցանիշները, շրջանավարտների աշխատանքի տեղավորվելու ցուցանիշները, ընդունելությունների թիվը և այլն:

Որակի բարձրացման միջոցառումների պլանում սահմանվում են ժամկետներ, պատաս-

խանատուներ, որոնց պահապանման վերահսկողությունն իրականացնում է ՈԱԿը:

ՄԿԾ-ՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Յուրաքանչյուր չորս տարին մեկ համալսարանի գիտխորհուրդը քննարկում է ՄԿԾ-ների վերանայման մասին հարցը, որի արդյունքում՝ անհրաժեշտության դեպքում, իրականացվում է վերանայում: Վերանայման համար հիմք են ծառայում ֆակուլտետային խորհուրդների կամ ամբիոնների կողմից իրականացվող ՄԿԾ-ների ինքնագնահատման արդյունքները, որոնք վկայում են վերանայման անհրաժեշտության մասին:

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄԸ

ՄԿԾ-ի ղեկավարը (ամբիոնի վարիչ կամ դեկան) ՈԱԿ-ին, մեթոդական խորհրդին և գիտխորհրդին, ներկայացնում է ինքնագնահատման աշխատանքների պլանն ու ժամանակացույցը:

Որակի ապահովման կենտրոնը, մեթոդական խորհուրդն ու գիտխորհուրդը քննարկում են ներկայացված փաստաթուղթը, կատարում դիտողություններ, առաջարկություններ:

Ինքնագնահատումն սկսվում է ուսումնական առաջին տարվա ավարտից հետո: Պատասխանատուն հանդիսանում է ՄԿԾ-ի ղեկավարը, որը պարտավոր է ներգրավել բոլոր շահակիցներին՝ օբյեկտիվ և ամբողջական տեղեկատվության ապահովման նպատակով:

Ինքնագնահատման հաշվետվությունը և ՄԿԾ-ի բարելավման գործողությունների պլանը ներկայացվում է ՈԱԿ, մեթոդական խորհուրդ և գիտխորհուրդ:

Ինքնագնահատման հաշվետվությունը պետք է լինի հասանելի համալսարանի կայքէջում:

ՄԿԾ վերանայման անհրաժեշտության նպատակով՝ գիտխորհուրդը կարող է ներգրավել արտաքին փորձագետների:

ՄԿԾ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ:

ՄԿԾ-ների մշտադիտարկումը դրանց բարելավմանը միտված գործընթաց է, որի իրականացման վերահսկողությունը վերապահված է համալսարանի Որակի ապահովման կենտրոնին: Մշտադիտարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրում են դեկանատները, ամբիոնները և համալսարանի մյուս ստորաբաժանումները: Տեղեկատվության տրամադրումը իրականացվում է այն կարգով ու ժամկետներում, որոնք սահմանված են որակի ապահովման կենտրոնի համապատասխան հանձնարարականում:

ԳԼՈՒԽ 4

ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4.1. ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Կրեղիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեղիտների միջոցով՝ ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման ընթացակարգերի և գործառույթների ամբողջությունն է, որտեղ շրջանավարտին համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեղիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո: Կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների էլքային կրթական արդյունքները և հատկացված կրեղիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն հրապարակվում են նախապես և հասանելի են ուսանողներին ու դասախոսներին:

Կրեղիտային համակարգի ներդրումը համալսարանում սկսվել է 2010-2011 ուստարվանից՝ նախ բակալավրի առկա կրթական ծրագրերում, ապա՝ մագիստրոսի առկա, 2014-2015 ուստարվանից՝ բակալավրի հեռակա կրթական ծրագրերում:

4.2. ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կրեղիտային համակարգի հիմնական գործառույթներն են՝

- կրեղիտների փոխանցում՝ ուսումնական ծրագրի բոլոր տարրերի աշխատածավալների արտահայտում կրեղիտներով և կրեղիտների փոխանցման հնարավորության ապահովում,

- կրեղիտների կուտակում՝ ուսանողի կողմից դասընթացների, դրանց յուրացման կիսամյակների և դասախոսի ընտրություն, ուսումնառության ինտենսիվության կարգավորման հնարավորություն, կրեղիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն:

Նշված գործառույթներից յուրաքանչյուրի իրականացումը ենթադրում է որոշակի պայմանների, պահանջների, գործընթացների ապահովում:

Կրեղիտների փոխանցման գործառույթի համար սահմանված են հետևյալ պահանջները.

-ՄԿԾ-ների արտահայտում մոդուլներով, դրանց բոլոր տարրերի (դասընթացների նկարագրեր, կրթական մոդուլներ, կուրսային աշխատանքներ, գործնական ու լաբորատոր պարապմունքներ, պրակտիկաներ, թեզեր և այլն) աշխատածավալների արտահայտում ուսանողի ուսումնական ողջ բեռնվածությունն (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեղիտներով,

- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան, ինչը նպաստում է ուսումնառողների շարժունությանը և շարունակական կրթություն ստանալու իրավունքի իրացմանը:

Կրեդիտների կուտակման գործառույթը ենթադրում է հետևյալ պայմանների առկայությունը.

- ուսումնական ծրագիրը բաղկացած է պարտադիր և կամընտրական դասընթացներից, որոնց յուրացման հաջորդականությունը սահմանափակվում է միայն դասընթացների նախապայմաններով(նախապայմանները շարադրված են դասընթացների նկարագրերում),
- ուսանողների կողմից դասընթացների ընտրության, ուսումնառության ինտենսիվության / ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն,
- դասընթացի՝ մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում, ուսանողի կողմից ընտրության հնարավորություն՝ կախված ժամանակացույցից և/կամ դասախոսին տրված նախապատվությունից:

Երևանի «Հայրուսակ» համալսարանը, կրեդիտային համակարգի մշակման և ներդրման աշխատանքներն իրականացնելիս, ձեռնարկել է ուսումնական պլանների, մասնագիտությունների կրթական ծրագրերի և դասընթացների նկարագրերի/մոդուլների վերանայման համապատասխան կանոնակարգերի, ընթացակարգերի կազմման ու ներդրման աշխատանքներ, դասախոսական և ուսումնասօժանդակ անձնակազմի վերապատրաստումներ:

ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Կրեդիտները մեկ բուհից մյուսը փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջափուլերի տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի դիմումի հիման վրա՝ երկու բուհերի համաձայնությամբ:

Կրեդիտները փոխանցելի են ուսումնական ծրագրերի և բուհերի միջև, եթե յուրացված ուսումնական ծրագիրը, նոր ուսումնական ծրագրի հետ համեմատած, ունի՝

- ա) բովանդակային նույնականություն,
- բ) բովանդակային ոչ էական տարբերություններ,
- գ) բովանդակային որոշ տարբերություններ, սակայն կրթական համարժեք վերջնարդյունքներ:

Այլ բուհում ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի անցկացման դեպքում՝ ուսանողի, համալսարանի և ընդունող բուհի միջև կնքվում է համաձայնագիր:

ԳԼՈՒԽ 5

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

5.1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ⁵, ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայբուսակ» համալսարանի սովորողների ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման քաղաքականությունը, կառուցված է գնահատման թափանցիկության, կիրառման տեսանկյունից պարզության ու դասախոսների և ուսանողների կողմից հասկանալի լինելու, կոռուպցիոն երևույթները բացառելու սկզբունքների վրա: Այդ համակարգը պետք է հնարավորություն ընձեռի ուսանողի ուսումնառության արդյունքները համադրել նախանշված վերջնարդյունքների հետ: Համակարգը միտված է ուսանողակենտրոն կրթության ամրապնդմանը: Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում բացահայտել ուսանողների կարողություններն ու հնարավորությունները, գտնել նրանց ուսումնառության թույլ կողմերը և ըստ այդմ՝ համապատասխան փոփոխություններ մտցնել ծրագրում, կամ ձեռնարկել անհատական մոտեցման ձևեր՝ կրթության որակը բարելավելու համար:

Գնահատման համակարգում կարևոր նշանակություն ունի արտաքին շահակիցների հարցումների բաղադրիչը, որը չնայած թվալին արտահայտություն չի գտնում գնահատման սանդղակում, սակայն ունի մեծ օբյեկտիվ նշանակություն՝ մոդուլների կամ մասնագիտության կրթական ծրագրերի արդյունավետության որոշման հարցում:

Բուհի գնահատման համակարգը նպատակաուղղված է ուսուցման արդյունավետության բարձրացմանը և հաստատության մասին հանրային կարծիքի ձևավորմանը:

5.2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ⁶

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգով սահմանվում է Երևանի «Հայբուսակ» համալսարանի (այսուհետև՝ ԵՀՀ) սովորողների ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման համակարգի հիմնադրույթները, մեթոդաբանությունը, սանդղակն ու նշագրումը:

1.2 Սույն կարգի ընդունման իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, «Կրեդիտային

⁵ Համալսարանը մշակել և հրատարակել է կրթության որակի գնահատման քաղաքականություն: Այստեղ այն բերելու անհրաժեշտություն չենք տեսնում, սակայն սովորողների ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման համակարգը կառուցված է՝ ելնելով կրթության որակի գնահատման քաղաքականությունից:

⁶ Հաստատվել է ԿՄԱ ԵՀՀ Գիտական խորհրդի 15.07.2016թ. թիվ 4 նիստում:

համակարգի օրինակելի», «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման», «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների՝ ամփոփիչ ատեստավորման անցկացման», ՀՀ ԿԳՆ կարգերը և ԵՀՀ կանոնադրությանը:

2. Սովորողների ուսումնառության արդյունքների ստուգման և գնահատման համակարգի հիմնադրույթները

2.1 ԵՀՀ-ի գնահատման համակարգը միտված է ուսանողների ուսումնառության արդյունավետության բարձրացմանը, կրթական գործընթացի շարունակական բարելավմանն ու կատարելագործմանը: Ուսումնառության արդյունքների գնահատումը կարող է լինել.

- ճանաչողական կամ դիագնոստիկ, որի շնորհիվ բացահայտվում են ուսանողների թույլ և ուժեղ կողմերը, ինչի հիման վրա հնարավորություն է ընձեռվում տարբերակված մոտեցում ցուցաբերել սովորողների հանդեպ, հարկ եղած դեպքում կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ,

- ձևավորող, որը իրենից ներկայացնում է դասախոսի կամ բարձր որակավորում ունեցող մասնագետի՝ ուսանողի գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատական կամ նրա մասին հայտնած բանավոր, գրավոր կարծիք: Դա նպաստում է սովորողի կարողությունների բացահայտմանը և մասնագիտական կրթության հանդեպ հետաքրքրությունների ու մոտիվացիայի ձևավորմանն ու զարգացմանը,

- արժևորող, որը նպաստում է ՄԿԾ-ի կամ դասընթացի հանդեպ ընդհանուր վերաբերմունքի դրսևորմանը, դրանց՝ որպես այդպիսիք գնահատմանը,

- ամփոփիչ, որը նպաստում է ուսանողի ուսումնառության արդյունքների բացահայտմանը և խրախուսում մասնագիտական նվաճումների շարունակականությունը:

2.2 ԵՀՀ-ում գործում է սովորողների ուսումնառության արդյունքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում, կրթական արդյունքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ, կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

բ) ընթացիկ ստուգումների իրականացման օգնությամբ՝ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով՝ որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդ-

յունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ կրթական վերջնարդյունքների գնահատման գործընթացում՝ հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ձեռք բերվող գիտելիքները, հմտությունները, կարողությունները:

3. Գնահատման սկզբունքները

ԵՀՀ-ն ուսանողներին պարբերաբար իրազեկում է առաջադրանքների կատարման, բուհում կիրառվող ստուգման և գնահատման կարգերին: Գնահատման, ստուգման իրականացման հիմքում դրված են մի շարք սկզբունքներ.

- *թափանցիկություն*- սա նշանակում է, որ գնահատման ժամանակ բացառվում են կոռուպցիան, կամայականությունը, թերագնահատումն ու գերագնահատումը,

- *համապատասխանություն*- դասընթացի նպատակների, դասավանդման և ուսումնառության մեթոդների, գնահատման մեթոդների ու չափանիշների միջև եղած համաձայնությունն է: Դասընթացի նպատակների, կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը ենթադրում է մեթոդական բազմազանություն, հետևաբար՝ գնահատման մեթոդաբանությունն էլ պետք է համահունչ լինի դրանց, բավականաչափ ճկունություն ունենա,

- *հետադարձ կապի ապահովում*- դասախոսը պետք է արձագանքի ուսանողի կողմից բարձրացվող խնդիրներին: Գնահատման պահանջներից մեկն էլ ուսանողի ներուժի, նրա ձեռքբերումների լիարժեք բացահայտումն է, իսկ դա վերջինիս ուսումնառությանը նպաստող հանգամանք է:

4. Գնահատման չափանիշները

Գնահատման չափանիշների ընտրությունը բխում է ՄԿԾ-ի կամ դասընթացի վերջնարդյունքներից: Կրթական վերջնարդյունքների նկարագրությունը, թույլ է տալիս, սահմանել այն գիտելիքները, հմտությունները, կարողությունները, որոնք պետք է ձեռք բերի սովորողը՝ տվյալ ծրագրի հաջող ավարտին: Գնահատման չափանիշների միջոցով, որոշվում է ուսանողի յուրացրածի համապատասխանության աստիճանը՝ նախանշված ծրագրային վերջնարդյունքներին:

ԵՀՀ գնահատման համակարգում կարևորվում են հետևյալ չափանիշները.

1. Ընդհանրական և մասնագիտական գիտելիք և ըմբռնում
2. Մասնագիտական կիրառական, փոխանցելի ու փոխկիրառելի կարողություններ և հմտություններ:

Ընդհանրական և մասնագիտական գիտելիքն ու ըմբռնումը դրսևորվում են հետևյալում.

- իրականացված աշխատանքի և նրա արդյունքների ներկայացմամբ ձեռք բերված գիտելիքների և հասկացությունների արտահայտման ունակություն,
- աշխատանքի/ հետազոտության ծավալով ու խորությամբ, մեթոդաբանության և կիրառված մեթոդների հստակությամբ,
- ուսումնասիրվող ոլորտում՝ առկա տեսությունների, շրջանառվող գաղափարների, ընդունված արժեքների իմացությամբ,
- տվյալ դասընթացի և ՄԿԾ-ի համատեքստային և քննադատական գաղափարներն ըմբռնելու ունակությամբ,
- փաստերը և առաջադրանքում առկա հիմնախնդիրները վերլուծելու կարողությամբ,
- փաստերը, գաղափարները և տեսությունները համադրելու կարողությամբ,
- գաղափարների, տեսությունների, հիմնախնդիրների լուծման մեթոդների հանդեպ քննադատական մտածողության դրսևորմամբ,
- եզրահանգումներ անելիս, որոշումներ կայացնելիս գիտելիքներն ու կարողությունները օգտագործելու ունակությամբ,
- ինքնատիպ, ինքնուրույն, ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերելու կարողությամբ:

Մասնագիտական կիրառական, փոխանցելի ու փոխկիրառելի կարողությունները և հմտությունները դրսևորվում են.

- կատարված աշխատանքում ցուցաբերված հմտություններով, օգտագործված միջոցների, սարքավորումների, նյութերի, տեխնիկայի, տեխնոլոգիաների տեղին և արդյունավետ կիրառմամբ,
- աշխատանքում ստացած գիտելիքների և հասկացությունների կիրառմամբ,
- մտավոր կարողությունները գործնականի հետ ստեղծագործաբար համադրելու հմտությամբ,
- հաղորդակցական, ուրիշին լսելու կարողությունների, թիմային աշխատանք իրականացնելու զարգացման աստիճանով,
- ինքնավարության և նախաձեռնողականության առկայությամբ,
- տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությամբ և կիրառման արհեստավարժությամբ,
- ժամանակի և նյութերի, միջոցների արդյունավետ օգտագործմամբ:

Նշված երկու չափանիշները՝ ընդհանրական և մասնագիտական գիտելիք ու ըմբռնում, մասնագիտական կիրառական, փոխանցելի ու փոխկիրառելի կարողություններ և

հմտություններ ունեն որոշակի բաղադրիչներ և յուրաքանչյուր ՄԿԾ-ի/դասընթացի դեպքում պետք է հստակեցվեն, որպեսզի հնարավորինս պարզ ու հասկանալի լինեն ուսանողների համար: Չափանիշների բաղադրիչները իրենցից ներկայացնում են կոնկրետ պահանջներ, առաջադրանքներ, հանձնարարություններ, որոնք պետք է կատարեն ուսանողները: Դրանք թույլ են տալիս չափումը/գնահատումը կոնկրետացնել: Գնահատման ժամանակ պետք է առաջնորդվել այն մոտեցմամբ, որ ընդհանրական և մասնագիտական գիտելիք ու ըմբռնում չափանիշին հատկացվի գնահատականի 30%-ը, իսկ մասնագիտական կիրառական, փոխանցելի ու փոխկիրառելի կարողություններ և հմտություններ չափանիշին՝ 70%-ը:

Գնահատման միավորի և ըստ չափանիշի ուսանողին ներկայացվող պահանջների միջև առկա կապը արտահայտվում է հետևյալ կերպ.

Չափանիշ		Հասկաց- վող միա- վորը
Ընդհանրական և մասնագիտական գիտելիք ու ըմբռնում	Մասնագիտական կիրառական , փոխանցելի ու փոխկիրառելի կարողություններ և հմտություններ	
Գերազանց և բացառիկ մտավոր կարողություններ, գիտելիքներ ու ըմբռնողություն, մասնագիտության կամ առարկայի խորքային մեկնաբանում, մեթոդաբանության խորը և պատճառաբանված ընկալում	Մասնագիտության, առարկայի և մասնագիտական լայն շրջանակների հետ կապված մասնագիտական փոխանցելի ու փոխկիրառելի կարողությունների գերազանց և բացառիկ հմտությամբ իրականացում, անկախ ստեղծագործական կարողությունների դրսևորում	10
Գերազանց և բազմակողմանի, գիտելիքներ ու ըմբռնողություն, մասնագիտության կամ առարկայի խորքային մեկնաբանում, մեթոդաբանության խորը և պատճառաբանված ընկալում	Մասնագիտության, առարկայի և մասնագիտական լայն շրջանակների հետ կապված մասնագիտական փոխանցելի ու փոխկիրառելի կարողությունների գերազանց կիրառում, նոր մեթոդների կիրառում	9
Հաստատուն և զգալի գիտելիքներ ու ըմբռնողություն, մասնագիտության կամ առարկայի մասին քննադատական և	Մասնագիտության, առարկայի և մասնագիտական լայն շրջանակների հետ կապված մասնագիտական փոխանցելի	

<p>համապատասխան մասնագիտական մոտեցման ցուցաբերում, մեթոդաբանության պատճառաբանված ընկալում</p>	<p>ու փոխկիրառելի կարողությունների հաստատուն կիրառում, տարբեր մեթոդների կիրառում</p>	<p>8</p>
<p>Գիտելիքների ձեռքբերում և ըմբռնողություն, մասնագիտության կամ առարկայի մասին քննադատական և համապատասխան մասնագիտական մոտեցման ցուցաբերում, համապատասխան մեթոդաբանության ընկալում</p>	<p>Մասնագիտության, առարկայի և մասնագիտական լայն շրջանակների հետ կապված մասնագիտական փոխանցելի ու փոխկիրառելի կարողությունների կիրառում՝ համապատասխան մասնագիտական մոտեցմամբ, պատշաճ մեթոդների կիրառում, վերահսկողական մոտեցումների ցուցաբերում</p>	<p>7</p>
<p>Բավարար գիտելիքների ձեռքբերում և բավարար ըմբռնողություն, մասնագիտության կամ առարկայի մասին իրազեկ մոտեցման ցուցաբերում, մեթոդաբանության բավարար ընկալում</p>	<p>Մասնագիտության, առարկայի և մասնագիտական լայն շրջանակների հետ կապված մասնագիտական փոխանցելի ու փոխկիրառելի կարողությունների բավարար կիրառում՝ առարկայի և մասնագիտության նկատմամբ համընդհանուր մոտեցումների ցուցաբերում</p>	<p>6</p>
<p>Բավարար գիտելիքների ձեռքբերում, մասնագիտության կամ առարկայի մասին իրազեկ մոտեցման ցուցաբերում, մեթոդաբանության մակերեսային ընկալում</p>	<p>Մասնագիտության, առարկայի և մասնագիտական լայն շրջանակների հետ կապված մասնագիտական փոխանցելի ու փոխկիրառելի կարողությունների բավարար կիրառում</p>	<p>5</p>
<p>Սահմանափակ և ոչ բավարար գիտելիքների ձեռքբերում և ըմբռնողություն</p>	<p>Փոխանցելի ու փոխկիրառելի մասնագիտական կարողությունների սահմանափակ կիրառում</p>	<p>4</p>
<p>Գիտելիքների թերի ձեռքբերում</p>	<p>Փոխանցելի ու փոխկիրառելի մասնագիտական կարողությունների թերի կիրառում</p>	<p>3</p>

5. Գնահատման մեթոդաբանությունը

5.1. Կրթական արդյունքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում՝ դասահաճախումների հաշվառման օգնությամբ,

բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում՝ կիսամյակի ընթացքում,

գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում՝ քննաշրջանում,

դ) ամբողջ դասընթացի կամ կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքի որակի և չափի գնահատում,

ե) ստուգումն ու գնահատումը իրականացնելիս՝ յուրաքանչյուր դասընթացի/մոդուլի համար հաշվի են առնվում առարկայական նկարագրով սահմանված գիտելիքները, հմտությունները, կարողությունները,

զ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի գնահատման հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

5.2. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալներից, պարապմունքների ձևերից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով յուրաքանչյուր դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

1) *եզրափակիչ գնահատումով դասընթացներ,*

2) *առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:*

1) *Եզրափակիչ գնահատումով դասընթացը* քննաշրջանի ընթացքում՝ անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ, կախված դասընթացի տեսակից նախատեսում է 1 ընթացիկ (միջանկյալ) ստուգում: Ընթացիկ ստուգումները անց են կացվում գրավոր, իսկ եզրափակիչ քննության ձևը՝ դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի ղեկանը:

Եզրափակիչ գնահատումով դասընթացից(ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար(կիսամյակային) գնահատականը/միավորը(Մ_{արդ.}) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին՝ ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է Մ_{սա...}=10 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության միավորը որոշվում է *աղյուսակ 1-ում* բերված սանդղակի չափանիշներին համապատասխան.

Աղյուսակ 1.

Մասնակցության աստիճանը (%)	Հատկացվող միավորը
91-100	10
81-90	9
71-80	8
61-70	7
51-60	6
41-50	5
31-40	4
21-30	3
11-20	2
1-10	1

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով կիրառվում են երկու տարբեր համակարգեր՝ կախված ուսուցանվող առարկայի տեսակից.

- Մասնագիտական դասընթացների դեպքում, ուսանողի կողմից ուսուցանվող նյութի յուրացման աստիճանը որոշելու համար անցկացվում է 1 ընթացիկ(միջանկյալ) ստուգում (Մ_{ընթ.ստ.}), որին հատկացվում է առավելագույնը 30 միավոր և եզրափակիչ քննություն , որը կարող է գնահատվել մինչև 50 միավոր(Մ_{եզր.քն.}):

- Հանրապետական բաղադրիչ հանդիսացող դասընթացների և բժշկական ցիկլային դասընթացների համար ուսանողի կողմից ուսուցանվող նյութի յուրացման աստիճանը որոշվում է միայն եզրափակիչ քննությամբ, որը կարող է գնահատվել մինչև 80 միավոր (Մ_{եզր.քն.}):

զ) Դասընթացի ընթացքում ուսանողի կատարած ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքի որակից և չափից, որին հատկացվում է առավելագույնը 10 միավոր(Մ^{Ինքն.}), ձևավորվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի միավորը, որը որոշվում է *Աղյուսակ 2-ում* բերված սանդղակի չափանիշներին համապատասխան.

Աղյուսակ 2.

Ինքնուրույն և ստեղծագործական աշխատանք	Հատկացվող միավորը (աշխատանքի ծավալից կախված)
Ուսանողը կարողանում է ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները, արել է սեփական եզրակացություններ:	10-9
Ուսանողը կարողանում է կիրառել ձեռք բերած գիտելիքները, կատարել վերլուծություններ և համադրումներ:	8-7
Ուսանողը կարողանում է կիրառել ձեռք բերած գիտելիքները, կատարել վերլուծություններ:	6-5
Ուսանողը կարողանում է կիրառել ձեռք բերած գիտելիքները, կատարել ընդհանրացումներ:	4-3
Ուսանողը մասնակի է կարողանում կիրառել ձեռք բերած գիտելիքները:	2-1

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունաբար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար`

$$Մ_{արդ.} = Մ_{մաս.} + Մ_{ընթ.ստ.} + Մ_{եզր.քն} + Մ^{Ինքն.}$$

Ըստ այդմ, *եզրափակիչ գնահատումով դասընթացներն*, ըստ իրենց տեսակի ունեն գնահատման հետևյալ սխեմաները մասնագիտական դասընթացների համար` *Աղյուսակ 3.*, հանրապետական բաղադրիչ հանդիսացող դասընթացների և բժշկական ցիկլային դասընթացների համար` *Աղյուսակ 4.*, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով).

Աղյուսակ 3.

Գնահատման բաղադրամասը	Մ _{մաս.}	Մ _{ընթ.ստ-1}	Մ _{եզր.քն-1}	Մ _{Ինքն}	Մ _{արդ}
Միավորը	10	30	50	10	100

Աղյուսակ 4.

Գնահատման բաղադրամասը	Մ _{մաս.}	Մ _{եզր.քն-2}	Մ _{Ինքն}	Մ _{արդ}
Միավորը	10	80	10	100

2) *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը* գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների (գնահատումների) արդյունքներով: Ընթացիկ ստուգումներն անց են կացվում հարցումների, գրավոր/ստուգողական աշխատանքների, անհատական առաջադրանքների (ռեֆերատ, էսսե և այլն) և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն ընտրում է դասընթացը կազմակերպող ամբիոնը:

Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Մ_{արդ.}) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի.

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Մ_{մաս.}, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը կարող է վաստակել 10 միավոր:

Մասնակցության աստիճանը գնահատվում է համաձայն *աղյուսակ 1*-ում բերված սանդղակի, բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ ստուգումների արդյունքներից ($\sum U_{\text{ընթ.ստ}2}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 40 միավոր:

գ) դասընթացի ընթացքում ուսանողի կատարած ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքի որակից և չափից, որին հատկացվում է առավելագույնը 10 միավոր (Մ_{Ինքն.}): Ուսանողի ինքնուրույն աշխատանքի միավորը որոշվում է *աղյուսակ 2-ում* բերված սանդղակի չափանիշներին համապատասխան:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$M_{\text{արդ.}} = M_{\text{մաս.}} + \sum U_{\text{ընթ.ստ}2} + M_{\text{Ինքն.}}$$

Ըստ այդմ, *առանց եզրափակիչ գնահատման դասընթացն* ունի գնահատման հետևյալ սխեման (*Աղյուսակ 5.*), որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար

սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով).

Աղյուսակ 5.

Գնահատման բաղադրամասը	Մմաս.	Մընթ.ստ.2-1	Մընթ.ստ.2-2	ՄԻնքն	Մարդ
Միավորը	10	40	40	10	100

5.3. Ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի միավորը որոշվում է *Աղյուսակ 6.-ում* ներկայացրած չափանիշներով:

Աղյուսակ 6.

Ուսուցանվող նյութի յուրացման աստիճանի գնահատման չափանիշներ	Միավորներ			
	Մընթ.ստ-1	Մեզր.քն-1	Մընթ.ստ.2	Մեզր.քն-2
Ուսուցանվող նյութը ուսանողի կողմից յուրացվել է ամբողջությամբ և անթերի	25-30	41-50	33-40	64-80
Ուսուցանվող նյութը ուսանողի կողմից յուրացվել է ամբողջությամբ, կան թերություններ	19-24	31-40	25-32	48-63
Ուսուցանվող նյութը ուսանողի կողմից յուրացվել է ոչ լրիվ, կան թերություններ	13-18	21-30	17-24	32-47
Ուսուցանվող նյութը ուսանողի կողմից յուրացվել է ոչ լրիվ, կան կոպիտ թերություններ	7-12	11-20	9-16	16-31
Ուսուցանվող նյութը ուսանողի կողմից չի յուրացվել	1-6	1-10	1-8	1-15

6. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը

6.1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես:

6.2. Եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ֆակուլտետները, և հաստատվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:

6.3. Ընթացիկ ստուգումներն անց են կացվում յուրաքանչյուր 7-8-րդ շաբաթը: Ընթացիկ ստուգումն անց է կացնում տվյալ առարկան դասավանդող դասախոսը առարկայի՝ դասացուցակով հատկացված ժամերին:

6.4. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում:

6.5. Քննության ավարտից հետո քննությունն ընդունած դասախոսը քննական ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է դեկանատ:

6.6. Քննության գնահատականը հրապարակելու պահից՝ ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև՝ նաև ֆակուլտետի դեկանին:

7. Գնահատման սանդղակը և նշագրումը

7.1. ԵՀՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է 100 միավորանոց սանդղակ, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 7.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը	
86-100	“Գերազանց”	A
76-85	“Լավ”	B+
66-75		B
56-65	“Բավարար”	C+
40-55		C
40-ից ցածր	“Անբավարար” ”	D

7.2. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 40-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է “Անբավարար”, կրեդիտներ չեն տրվում:

8. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

8.1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն, ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԵՀՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար նրա

ընդունման պահից սկսած վարում են *ակադեմիական տեղեկագիր*, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականները՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

8.2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

8.3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- գումարային կրեդիտների քանակը,
- գնահատված կրեդիտների քանակը,
- վարկանիշային միավորները,
- միջին որակական գնահատականը:

8.4. *Գումարային կրեդիտը (Կ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

8.5. *Գնահատված կրեդիտը (ԳԿ)* գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով:

8.6. *Վարկանիշային միավորը (ՎՄ)* յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է՝ որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար:

8.7. *Միջին որակական գնահատականը (ՄՈԳ)* կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով:

8.8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *արդյունարար* (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

9. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը

9.1. Դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս՝ հաշվի չեն առնվում հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը կամ դիմումը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

9.2. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի՝ միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:

9.3. Հարգելի պատճառով ընթացիկ ստուգմանը չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել մինչև հաջորդ ընթացիկ ստուգումն ընկած ժամանակահատվածում (մինչև եզրափակիչ քննությունը, իսկ 2-րդ ընթացիկ ստուգումը՝ մինչև քննաշրջանի սկիզբը)՝ նախապես այն համաձայնեցնելով դեկանատի և պարապոդ դասախոսի հետ:

9.4. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է վերահանձնել այն:

9.5. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 40-ի շեմը չապահոված ուսանողն՝ ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը:

9.6. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 40-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը:

9.7. Ուսանողի համալսարանից հեռացման (կախված նրա առաջադիմությունից, կամ այլ պատճառներից) և վերականգնման գործընթացները կարգավորվում են ՀՀ ԿԳ նախարարության՝ «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգով⁷:

10. Կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորումը

10.1. Բակալավրի կրթական ծրագիր

• Բակալավրի որակավորման աստիճանի համար եզրափակիչ ատեստավորումը իրականացվում է ամփոփիչ քննությունների կամ ավարտական (դիպլոմային) աշխատանքի տեսքով: Ամփոփիչ քննությունները նախատեսվում են ինչպես առանձին առարկաների, այնպես էլ հարակից առարկաների խմբի համար: Ամփոփիչ քննությունները և ավարտական (դիպլոմային) աշխատանքների պաշտպանությունը անցկացվում են Բանավոր:

⁷ Տե՛ս Հավելված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թ. նոյեմբերի 17- ի թիվ 1242-Ն հրամանի Պետ.գրանցում 27.12.2011 կողմ` 11011570 Կ Ա Ը Գ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ (ԱԶԱՏՄԱՆ) ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՐՈՒՄ:

• Ամփոփիչ քննությունների հարցաշարերը կազմում են մասնագիտական ամբիոնները, հաստատում է ֆակուլտետի խորհուրդը և համապատասխան ամբիոնների կողմից շրջանավարտներին է տրամադրվում ոչ ուշ, քան ամփոփիչ ատեստավորումից 3 ամիս առաջ:

• Մասնագիտական ամփոփիչ քննության և ավարտական (դիպլոմային) աշխատանքների գնահատումը կատարվում է 20 միավորանոց սանդղակով, որոնք համապատասխանորեն ներկայացված են *աղյուսակներ 8 և 9-ում*:

20 միավորանոց սանդղակ մասնագիտական ամփոփիչ քննությունների համար

Աղյուսակ 8.

Թիվ	Գնահատման արդյունարար միավոր	Գնահատական
1	18-20	«Գերազանց»
2	14-17	«լավ»
3	8-13	«Բավարար»
4	8-ից ցածր	«Անբավարար»

20 միավորանոց սանդղակ և գնահատման միավորների չափաքանակները ավարտական (դիպլոմային) աշխատանքի գնահատման համար

Աղյուսակ 9.

Թիվ	Չափանիշ	Առավելագույն միավորը
1	Ներկայացման որակը	6
2	Ինքնուրույնության աստիճանը	6
3	Ձևակերպման որակը	6
4	Արդիականությունը/տրոյթը	2
	Ընդամենը՝	20

• Ամփոփիչ քննությունների և ավարտական (դիպլոմային) աշխատանքի պաշտպանության թույլատրվում են այն շրջանավարտները, ովքեր ավարտել են հիմնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը և հաջողությամբ հանձնել

ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված բոլոր քննություններն ու ստուգարքները և կուտակել համապատասխան կրեդիտներ:

- Ամփոփիչ քննությունները և ավարտական (դիպլոմային) աշխատանքների պաշտպանությունները իրականացվում են՝ համաձայն՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի⁸:

10.2. Մագիստրոսի կրթական ծրագիր

- Ուսանողի կողմից մագիստրոսի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է մագիստրոսական թեզի կատարումով և պաշտպանությամբ:

- Մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի նշանակումը և թեմայի հաստատումը իրականացվում է 1-ին կիսամյակում:

- Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա) թեզի ներկայացում՝ մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման քննարկմանը՝ պաշտպանությունից 4 շաբաթ առաջ: Թեզի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարված աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ) մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանություն՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

- Մագիստրոսական թեզի պաշտպանությունն իրականացվում է՝ համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի:

- Մագիստրոսական թեզի գնահատումը կատարվում է *աղյուսակ 8*-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:

- Մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները(*Աղյուսակ 10*).

Աղյուսակ 10.

⁸ Տե՛ս Հավելված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թ. հոկտեմբերի 31- ի թիվ 1197-Ն հրամանի Պետ.գրանցում 01.12.2011 կողմից՝ 11011506 Կ Ա Ր Գ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ:

Թիվ	Չափանիշ	Առավելագույն միավորը
1	Արդիականությունը/տրույթը	6
2	Ինքնուրույնության աստիճանը	6
3	Ձևակերպման որակը	4
4	Ներկայացման որակը	4
	Ընդամենը՝	20

10.3. Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագիր

• ԵՀՀ-ում բժշկական մասնագիտությունների (բուժական գործ և ստոմատոլոգիա) համար կրթությունը իրականացվում է անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով, որի արդյունքում շնորհվող կրթական աստիճանը համապատասխանում է մագիստրոսի կրթական աստիճանին:

• Ստացած գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական ամփոփիչ քննությունների հանձնմամբ:

• Ամփոփիչ քննությունները անցկացվում են բանավոր:

• Ամփոփիչ քննությունների հարցաշարերը կազմում են մասնագիտական ամբիոնները, հաստատում է ֆակուլտետի խորհուրդը և համապատասխան ամբիոնների կողմից շրջանավարտներին է տրամադրվում ոչ ուշ, քան ամփոփիչ ատեստավորումից 3 ամիս առաջ:

• Մասնագիտական ամփոփիչ քննության գնահատումը կատարվում է 20 միավորանոց սանդղակով, որը ներկայացված է *աղյուսակ 8-ում*:

• Ամփոփիչ քննություններին թույլատրվում են այն շրջանավարտները, ովքեր ավարտել են մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը և հաջողությամբ հանձնել ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված բոլոր քննություններն ու ստուգարքները և կուտակել համապատասխան կրեդիտներ:

• Ամփոփիչ քննությունները իրականացվում են՝ համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի:

11. Կրեդիտների փոխանցումը

11.1. Այլ բուհերից ԵՀՀ բակալավրի, մագիստրոսի, անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների (կիսամյակ, ուստարի) տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ ընդունող բուհերի համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

11.2. Այլ կրթական ծրագրից ԵՀՀ կրթական ծրագրի կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե դրանց բովանդակությունները միանման են, կամ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

12. Ակադեմիական ազնվություն և պայքար գրագողության դեմ

12.1. ԵՀՀ-ում ուսումնառության արդյունքների ստուգումն ու գնահատումը իրականացվում է անկողմնակալ, թափանցիկ, օբյեկտիվ: Արգելվում են կողմնակալությունը, հովանավորչությունը և գրագողությունը:

Գրագողությունը ուրիշի աշխատանքի ներկայացումն է որպես սեփական: Գրագողությանը համարժեք է նաև որևէ մեկի աշխատանքը որպես խմբային աշխատանք ներկայացնելը:

Ուրիշների մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: Գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո:

13. Ուսանողի գնահատման համակարգի արդյունավետության որոշման չափանիշներ և գործիքներ

ա/ Գնահատման համակարգի արդյունավետության որոշման չափանիշներ.

Գնահատման համակարգը պետք է թույլ տա.

- բացահայտել ուսումնառության վերջնարդյունքների՝ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձեռքբերումը,
- ցուցաբերել օբյեկտիվություն, բացառել կոռուպցիան,
- խրախուսել սովորողի ուսումնառության ձգտումը,
- բացահայտել ծրագրի թույլ, թերի կողմերը:

բ/ Գնահատման համակարգի արդյունավետության որոշման գործիքներ.

- ուսանողների, դասավանդողների և շրջանավարտների հետ անցկացվող հարցումներ;
- Ֆոկուս խմբեր;
- դասալսումներ;
- վիճակագրական տվյալներ:

6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

6.1. ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՄԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԳՑ՝

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Երևանի «Հայրուսակ» համալսարանի (այսուհետ՝ ԵՀՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է:

1.2 Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրության համապատասխան՝ ԵՀՀ կանոնադրության և սույն կարգի հիման վրա:

1.3 Կենտրոնը սույն կարգով սահմանված նպատակների և խնդիրների լուծման համար համագործակցում է ԵՀՀ այլ կառուցվածքային ստորաբաժանումների և արտահամալսարանական տարբեր կազմակերպությունների հետ՝ սահմանված կարգի համաձայն:

1.4 Կենտրոնի գործունեությունը ֆինանսավորվում է ԵՀՀ միջոցներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ԵՀՀ կանոնադրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

1.5 Սույն կարգում փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծումն, իրականացվում է ԵՀՀ գիտական խորհուրդը՝ ԵՀՀ ռեկտորի ներկայացմամբ:

2. Կենտրոնի նպատակները

2.1 Կենտրոնի հիմնական նպատակն է ապահովել ԵՀՀ-ում կրթության որակը:

2.2 Մշակել, ներդնել, իրականացնել և մշտապես բարելավել ԵՀՀ-ում կրթության որակի ապահովման մեխանիզմներ:

3. Կենտրոնի խնդիրները

3.1. ԵՀՀ ՈԱԿ-ի քաղաքականության ու ռազմավարության մշակում և պարբերական վերանայում:

3.2. ԵՀՀ ՈԱԿ-ը ապահովում է վարչական աջակցություն բոլոր մակարդակներում մշակված ռազմավարության իրագործմանը:

3.3. ԵՀՀ ՈԱԿ-ը ապահովում է որակի միասնական չափանիշների պահպանում, ՈԱ գործընթացների ներդաշնակեցում և իրականացում ԵՀՀ գործունեության բոլոր հիմնական ոլորտներում:

3.4. ԵՀՀ ՈԱԿ-ը ապահովում է կրթության ներքին որակի համար հաշվետվողականություն (ուսանողներ, դասախոսական և վարչական կազմ) և արտաքին (դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ, պետություն և հասարակություն) շահակիցների առջև:

⁹ Երևանի «Հայրուսակ» համալսարանի կրթության որակի ապահովման կենտրոնի կարգը հաստատվել է ԵՀՀ ռեկտորի կողմից 19.09.2008թ.:

3.5. ԵՀՀ ՈԱԿ-ը ապահովում է կանոնակարգային և կազմակերպչական հենքի ստեղծում և վարչական օժանդակություն՝ համալսարանի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև կապը:

3.6. ԵՀՀ ՈԱԿ-ը ապահովում է ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների և համալսարանների ՈԱ կենտրոնների հետ կապերի հաստատում և ամրապնդում:

4. Կենտրոնի գործառույթները

ՈԱ Կենտրոնը՝

4.1. մշակում, իրականացնում և մշտապես բարելավում է որակի ներքին ապահովման գործընթացները, զեկուցում դրանց արդյունքների մասին, սահմանում է որակի ներքին չափանիշներ և չափորոշիչներ՝ ընդունված եվրոպական պահանջներին համահունչ,

4.2. մշակում է ԵՀՀ ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը,

4.3. համակարգում, վերահսկում և վարչական աջակցություն է տրամադրում ՈԱ գործընթացների իրականացմանը ԵՀՀ բոլոր ստորաբաժանումներում,

4.4. ապահովում է ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ուսանողների, շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը,

4.5. կազմակերպում է ԵՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման գործընթացը, համապատասխան զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը,

4.6. համակարգում է համալսարանի ստորաբաժանումների աշխատանքը հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ,

4.7. համագործակցում է ՀՀ մասնագիտական կրթության «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հետ,

4.8. ապահովում է կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը և ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին,

4.9. պատրաստում է ՈԱ ընթացակարգեր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման համար, համակարգում և աջակցում է դրանց իրականացմանը ԵՀՀ բոլոր ստորաբաժանումներում,

4.10. կազմակերպում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան, ստուգում է նոր և վերանայված կրթական ծրագրերի փաստաթղթային փաթեթները,

4.11. համակարգում է ԵՀՀ կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և օժանդակում դրանց արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին,

4.12. մշակում և իրականացնում է դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ գործիքները (հարցումներ, Ֆոկուս խմբեր և այլն) և ընթացակարգերը,

4.13. համագործակցում է ԵՀՀ գիտական խորհրդի և ֆակուլտետների ՈԱ պատասխանատուների հետ և աջակցում նրանց աշխատանքներին:

5. Կենտրոնի կառուցվածքը և կառավարումը

5.1 ՈԱԿ-ի աշխատանքների ընդհանուր համակարգումը վերապահվում է ԵՀՀ ռեկտորին:

5.2. ՈԱԿ-ը ղեկավարում է կենտրոնի տնօրենը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ԵՀՀ ռեկտորը:

5.3. ՈԱԿ-ի հաստիքացուցակը սահմանում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ԵՀՀ ռեկտորը:

5.4. ՈԱԿ-ի տնօրենը՝

5.4.1. պլանավորում, կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը՝ համաձայն ԵՀՀ կանոնադրության, մասնակցում ԵՀՀ ռեկտորատի աշխատանքներին,

5.4.2. ԵՀՀ ռեկտորատում և գիտական խորհրդում հանդես է գալիս համապատասխան հաշվետվություններով, զեկույցներով և հաղորդումներով,

5.4.3. ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանցից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է այլ ստորաբաժանումների հետ փոխգործակցությունը,

5.4.4. ստորագրում է Կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը, կատարում նշագրումներ, Կենտրոնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում զեկույցներ ու փաստաթղթեր,

5.4.5. Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված՝ կարող է հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության՝ ԵՀՀ ռեկտորին, պրոռեկտորին, ներկայացնում է՝ համապատասխան զեկույց և առաջարկություններ՝ Կենտրոնի գործունեությանն անոշվող աշխատանքների վերաբերյալ,

5.4.6. ԵՀՀ ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ՝ Կենտրոնի աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու և վերապատրաստելու վերաբերյալ,

5.4.7. ներկայացնում է Կենտրոնը արտաքին շփումներում, Կենտրոնի աշխատանքները կազմակերպելու նպատակով հանդիպում տարբեր կազմակերպությունների հետ, նախապատրաստում և ստորագրում համապատասխան համագործակցությանն առնչվող փաստաթղթեր՝ դրանց մասին պարբերաբար զեկուցելով և համաձայնեցնելով ռեկտորի հետ,

5.4.8. կազմակերպում և հսկում է Կենտրոնում տարվող գարծավարությունը, ինչպես նաև կատարում Կենտրոնի խնդիրների լուծման հետ կապված այլ աշխատանքներ,

5.4.9. պատասխանատվություն է կրում Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Կենտրոնի առջև դրված խնդիրների՝ հնարավորինս պատշաճ և արդյունավետ լուծման համար:

6.2. ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՄԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵԼԸ¹⁰

Երևանի «Հայբուսակ» համալսարանի(այսուհետ՝ ԵՀՀ) որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) քաղաքականությունը ԵՀՀ-ի առաքելության, ռազմավարական ծրագրում ամրագրված նպատակների իրականացմանն ուղղված մոտեցումների, գործողությունների և գործընթացների ուղեցույց ու ընթացակարգ է, որը համահունչ է Բարձրագույն կրթության զարգացման ՀՀ քաղաքականության նպատակներին ու սկզբունքներին, կրթության որակի ապահովման եվրոպական ու ազգային չափորոշիչներին ու ուղենիշներին, բուհի շահակիցների ակնկալիքներին:

ՈԱ քաղաքականության կենսագործման համար հիմք են հանդիսանում բացառապես ԵՀՀ-ի ռեսուրսներն ու կարողությունները:

ՈԱ քաղաքականության նպատակն է.

- Ապահովել ԵՀՀ-ում մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավումը՝ մասնագիտական կրթության բովանդակությունը համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին:

- Զարգացնել ԵՀՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունները, առավելագույնի հասցնել դրանց նպատակային օգտագործումը ի շահ կրթության որակի բարձրացման:

- Ապահովել ԵՀՀ-ում իրականացվող ուսումնական գործընթացի արդյունավետությունը՝

¹⁰ Ընդունվել է ԵՀՀ Գիտխորհրդի 13.11.2015թ. նիստում :

մշակելով ու ներդնելով թափանցիկ և իրատեսական ընթացակարգեր:

ԵՀՀ-ի որակի ապահովման քաղաքականության խնդիրներն են.

- Բարելավել ԵՀՀ-ի կառավարման համակարգը, մեծացնել ստորաբաժանումների պատասխանատվությունը իրենց գործառույթների անթերի կատարման հարցում,

- Շարունակաբար իրականացնել ԵՀՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկում և բարելավում՝ ելնելով ՀՀ կրթական բարեփոխումների քաղաքականությունից բխող պահանջներից ու որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչներից,

- Ապահովել ԵՀՀ-ի որակի ապահովման գործընթացներում ուսանողների, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի լիարժեք ներգրավվածությունը,

- Օժանդակել ԵՀՀ-ում իրականացվող գիտահետազոտական գործունեության զարգացմանը և ապահովել ուսումնական գործընթացի հետ նրա փոխկապակցվածությունը,

- Որակյալ կրթության տրամադրման միջոցով նպաստել ԵՀՀ-ի ֆինանսական ռեսուրսների մուտքերի մեծացմանը և դրանց արդյունավետ, նպատակային օգտագործմանը,

- Բարձրացնել ԵՀՀ-ի հասարակական պատասխանատվությունը, ապահովել հաշվետվողականությունը, մեծացնելով տեղեկատվության թափանցիկությունն ու հասանելիությունը,

- Ընդլայնել ԵՀՀ-ի միջազգային կապերը, զարգացնել դասավանդողների և ուսումնառողների շարժունությունը, հետևողականորեն ինտեգրվել եվրոպական միասնական կրթական տարածքին,

- Աստիճանաբար որակի կառավարման շրջափուլային մոդելը՝ ՊԻՄԲ ներդնել բուհի բոլոր ստորաբաժանումներում և հասնել դրա անշեղ կիրառմանը,

- Զարգացնել և ամրապնդել ԵՀՀ-ի ՈԱ համակարգը, բարձրացնել մասնաճյուղի և ֆակուլտետների որակի ապահովման օղակների պատասխանատվությունը որակի կառավարման հարցերում,

- Իրականացնել ՈԱ համակարգի գործունեության մշտադիտարկում՝ դրանց ուսումնասիրման, գնահատման, տարեկան ու հնգամյա ինքնավերլուծությունների հիման վրա, բացահայտել հաստատության թույլ և ուժեղ կողմերը, կատարելագործել ՈԱ ընթացակարգերն ու գործառույթները,

- Իրականացնել ԵՀՀ-ի ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրմանը նպաստող նախապատրաստական աշխատանքներ,

- Նպաստել ԵՀՀ-ում որակի մշակույթի ձևավորմանը և զարգացմանը:

ԵՀՀ-ի ՈԱ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ԵՀՀ-ի որակի ապահովման քաղաքականության նպատակների իրականացումն ու խնդիրների լուծումը ենթադրում են հետևյալ ընթացակարգերի իրականացումը.

Ա/ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈԱ.

- կրթական ծրագրերի պլանավորման, մշակման, փորձաքննության, հաստատման, պարբերական մշտադիտարկման, գնահատման և վերանայման ընթացակարգերի առկայություն,
- կրթական ծրագրերի համապատասխանեցում որակավորումների ազգային և եվրոպական շրջանակներին,
- կրթական ծրագրերի պլանավորման, կազմման, փորձաքննության, հաստատման, պարբերական մշտադիտարկման, գնահատման և վերանայման գործընթացներում բոլոր շահակիցների մասնակցության ապահովում,
- կրթական ծրագրերի սահմանված նպատակների և դասավանդման, ուսումնառության ու գնահատման ընտրված մեթոդների համապատասխանեցում ակնկալվող կրթական վերջնարդյունքներին,
- կրթական ծրագրերի և դասընթացների որակի վերաբերյալ ուսանողների ու գործատուների բավարարվածության կանոնավոր հարցումների անցկացում:

Բ/ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈԱ.

- ԵՀՀ Կառավարման համակարգի բարեփոխումների իրականացում, որը միտված է ՈԱ գործընթացների ապահովմանը,
- բուհի ստորաբաժանումների գործունեության կանանակարգերի համապատասխանեցում ՈԱ պահանջներին,
- պաշտոնների անձնագրերի, յուրաքանչյուր աշխատակցի գործառույթների ճշգրտում և հստակեցում,
- բոլոր աշխատակիցների, բոլոր ստորաբաժանումների գործունեության պլանավորման և հաշվետվողականության ապահովում,
- ՈԱ գործընթացներում իրենց գործառույթների անթերի կատարման հարցում բոլոր ստորաբաժանումների պատասխանատվության բարձրացում:

Գ/ ԴԱՄՍՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՍ.

- Դասախոսակենտրոն կրթության փոխարինում ուսանողակենտրոն մոտեցմամբ և վերջինիս արմատավորում,
- Ժամանակակից դասավանդման մեթոդների լայն կիրառում,
- Դասալսումների միջոցով դասավանդողների առաջավոր փորձի բացահայտում և դրա տարածում, տեղ գտած թերությունների և բացթողումների վերհանում և դրանց բացառման ուղղությամբ քայլերի իրականացում,
- Դասընթացների/ուսումնական մոդուլների յուրացման արդյունքների օբյեկտիվ և թափանցիկ գնահատում (ընթացիկ և ամփոփիչ քննություններ):
- Ծրագրերի կրթական վերջնարդյունքների օբյեկտիվ և թափանցիկ գնահատում (ավարտական ամփոփիչ ատեստավորում):
- Գնահատման ձևերի, մեթոդների և դրանց արդյունավետության վերաբերյալ ուսանողական պարբերաբար հարցումների կազմակերպում:
- Ուսանողների ուսումնառության գործընթացի վերաբերյալ դասախոսների շրջանում պարբերական հարցումների անցկացում՝ կիրառվող չափանիշների, ձևերի ու մեթոդների արդյունավետության գնահատման ու բարելավման նպատակով:

Դ/ ԴԱՄՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՍ.

Դասախոսական կազմի գործունեության արդյունավետության պարբերական գնահատում բազմաչափ մոտեցմամբ՝ ներառելով ուսանողների, ամբիոնի վարիչի և գործընկեր դասախոսների կողմից դասախոսի գնահատումը, դասախոսի ինքնագնահատումը:

- Դասախոսների որակավորման շարունակական բարձրացման և մասնագիտական վերապատրաստման գործուն համակարգի մշակում և իրականացում:
- Դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման, տարբերակված վարձատրության, խրախուսման համակարգերի մշակում, կիրառում և շարունակական բարելավում:

Ե/ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՈՍ.

- Բուհի նյութատեխնիկական հագեցվածության համապատասխանեցում արդի պահանջներին ու համալսարանի կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերման պահանջներին, լսարանների, կաբինետների, ուսումնական լաբորատորիաների պատշաճ տեսքի ու կահավորանքի ապահովում,

- Ենթակառուցվածքների համապատասխանեցում շահառուների/այդ թվում՝ սահմանափակ կարողություններ ունեցող անձանց/ կարիքների,

- Շենքային պայմաններից, ուսումնական ռեսուրսներից, օժանդակ ծառայություններից բավարարվածության վերաբերյալ հարցախույզերի անցկացում ուսումնառողների ու դասավանդողների միջավայրում:

Ե/ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՍ.

- ԵՀՀ-ի հիմնական գիտական ուղղություններում հետազոտությունների շարունակում և ընդլայնում,

- պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության ակտիվացում և խրախուսում, գիտական աշխատությունների հրատարակմանը օժանդակում,

- գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության ավելացում, ՈԻԳԸ և ուսանողական պառլամենտի գործունեության ակտիվացում,

- դասախոսական կազմի վարկանիշավորման և վարձատրության ու խրախուսման գործում գիտական ուսումնասիրությունների ու հրատարակությունների հաշվառում:

Զ/ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՈՍ.

- զարգացնել ԵՀՀ-ի միջազգային կապերը, հաստատել նոր գործընկերային հարաբերություններ արտերկրի ուսումնական, գիտական, մշակութային, առողջապահական, հասարակական կազմակերպությունների հետ,

- խորացնել համագործակցությունը գործընկերների հետ,

- իրականացնել փոխանակային ծրագրեր, այդ թվում գործող միջազգային ծրագրերով, նպաստել դասավանդողների և ուսումնառողների շարժունությունը, հետևողականորեն բարձրացնել դասախոսների և ուսանողների օտար լեզուների տիրապետման մակարդակը:

Է/ ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՈՍ.

- ԶԼՄ-ներում և համացանցում ԵՀՀ-ի վերաբերյալ հրապարակվող նյութերի քանակի, ծավալի և բովանդակության մշտադիտարկում,

- ԵՀՀ-ի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունների պարբերաբար անցկացում,

- Բուհի հետ շրջանավարտների հետադարձ կապի մեխանիզմների կատարելագործում,

- ԵՀՀ-ի հասարակական պատասխանատվության բարձրացում, մատուցվող հանրային ծառայությունների ծավալի ավելացում, որակի գնահատում:

6.3. «ՀԱՅԲՈՒՄԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԸ

ՀԱՐՑԱՇԱՐ №1

ԴԵԿԱՆԱՏԻ/ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

№	Անհրաժեշտ պայմանները	Առկայությունը
1	Դեկանատի /դեպարտամենտի աշխատանքային պլան	
2	Դասապրոցների և քննաշրջանների պատշաճ կազմակերպում և վերահսկում	
3	Ուսանողի անձնական գործի փաթեթի առկայություն	
4	Ուսանողների ուսումնական, արտադրական պրակտիկաների անցկացման կազմակերպում	
5	Հրամաններ, կարգեր, որոշումներ	
6	Ցուցապատառների վրա դասախոսներին և ուսանողներին վերաբերվող կարգերի ներկայացում	
7	Դասախոսների արտալսարանային աշխատանքների համար պայմանների ապահովում	
8	Ուսման առաջադիմության արդյունքների քննարկման վերլուծություն և խրախուսական միջոցների և կարգապահական պատասխանատվության կիրառման մասին առաջարկության ներկայացում	
9	Մասնագիտությունների ուսումնական պլանների և աշխատանքային պլանների առկայություն	
10	Դասացուցակի առկայություն / ա. թ. բուհում ուսումնառող կուրսերի նախորդ տարիների դասացուցակները/	
11	Ուսանողների առաջադիմության ամփոփաթեթեր և տեղեկագրեր / ա. թ. տարբերությունների հանձնման տեղեկագրեր/	

12	Ֆակուլտետային խորհրդի նիստերի արձանագրություններ	
----	--	--

ՀԱՐՑԱՇԱՐ Ը 2

ԱՄԲԻՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

Ամբիոնների գործունեության անհրաժեշտ փաստաթղթերն ու պայմանները

№	Անհրաժեշտ պայմանները	Առկայությունը
1	Դասալսումների պլան, զեկուցագրեր և արձանագրություններ	
2	Ամբիոնի դասախոսների ատեստավորման և վերապատրաստման նյութեր	
3	Կրթության ոլորտին վերաբերող փաստաթղթեր, մասնագիտական կրթական չափորոշիչներ, պաշտոնական հրահանգներ, ուսումնական պլաններ, դասընթացների ծրագրեր	
4	Ամբիոնի տարեկան հաշվետվություններ	
5	Ամբիոնի գործունեությանն առնչվող այլ փաստաթղթեր	
6	Ամբիոնների նիստերի անցկացման ժամանակացույց և արձանագրություններ	
7	Ամբիոնի առարկաների գծով ուսանողների ուսման առաջադիմության արդյունքների քննարկումներ, վերլուծություններ	
8	Ուսանողների ուսումնական, արտադրական պրակտիկաների ղեկավարման նյութեր	
9	Ամբիոնի անդամների պորտֆոլիոն (անհատական աշխատանքային պլանները, առարկայական ծրագրերը, ուսումնամեթոդական փաթեթը (դասախոսությունների, ստուգողական աշխատանքների, դիպլոմային աշխատանքների թեմատիկան), գիտահետազոտական թեման, տարեկան հաշվետվությունները՝ ներառյալ հրապարակումների ցանկը, ուսանողների հետ արտալսարանային աշխատանքի նյութերը, անհատական խորհրդատվության նյութերը և այլն:	
10	Ամբիոնի գործերի անվանացանկ	

11	Ավարտական քննությունների հարցաշարեր	
12	Ամբիոնի դասախոսների ուսումնական բեռնվածք	
13	Ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովի նախագահների հաշվետվություններ	
14	Ամբիոնի ռազմավարական և կարճաժամկետ ծրագրեր, աշխատանքային պլան	
15	Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման պլան	
16	Միջանկյալ և եզրափակիչ քննությունների հարցաշարեր	

ՀԱՐՑԱՇԱՐ ԴՅՅ

*ՌԵՍՈՒՐՍԵՐԻՑ ՈՒ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ*

Խնդրում ենք ստորև ներկայացված հինգ բալանոց սանդղակով գնահատել հանալսարանի հետևյալ ռեսուրսներից ու ենթակառուցվածքներից Ձեր բավարարվածության աստիճանը.

Բոլորովին բավարարված չեմ -1---2---3---4---5 -Լիովին բավարարված եմ 00.Դժվարանում եմ պատասխանել

№	Անվանումը	Գնահատականը
1	Բուժետ - սրճարան	
2	Պահնորդային ծառայություն	
3	Գրադարան	
4	Օնլայն գրադարան	
5	Ինտերնետ կապ	
6	Սանհանգույցներ	
7	Ջեռուցում	
8	Լաբորատորիաներ, կաբինետներ, արհեստանոցներ, արվեստանոցներ, պրակտիկայի բազաներ	
9	Առաջին բուժօգնություն	
10	Պոլիկլինիկա	
11	Մարզադահլիճ	
12	Արշավներ	

ՀԱՐՑԱՇԱՐ № 4

*ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ*

Խնդրում ենք ստորև ներկայացված հինգ բալանոց սանդղակով գնահատել հանալսարանի հետևյալ վարչական մարմինների աշխատանքից Ձեր բավարարվածության աստիճանը.

Բոլորովին գոհ չեմ -1---2---3---4---5- Լիովին գոհ եմ

00.Դժվարանում եմ պատասխանել

	Հ ա ր ց	1	2	3	4	5
1	Որք՞անով եք գոհ ռեկտորի աշխատանքից					
2	Որք՞անով եք գոհ դեկանի աշխատանքից					
3	Ո՞րքանով եք գոհ ուսումնասօժանդակ անձնակազմի աշխատանքներից					

ՀԱՐՑԱՇԱՐ № 5

*ԴԱՍԱԽՈՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ*

1.Դասընթացը արդարացրե՞ց Ձեր ակնկալիքները:

- Այո, ամբողջովին
- Այո, հիմնականում
- Ոչ այնքան (նշել պատճառները) _____
- Չարդարացրեց բացարձակապես (նշել պատճառները) _____

2.Միջին հաշվով որքա՞ն ժամանակ եք տրամադրել յուրաքանչյուր թեմայի ինքնուրույն ուսումնասիրությանը:

- 0 ժամ (չեմ կարդացել նյութերը)
- 1 ժամից պակաս
- 1 ժամ
- 1 ժամից ավելի

3.Գո՞հ եք, արդյոք , Ձեր դասախոսի կատարած աշխատանքից:

- Այո, ամբողջովին
- Այո, հիմնականում
- Ոչ այնքան
- Ոչ

4.Ի՞նչ նոր կարողություններ և հմտություններ եք ձեռք բերել այս դասընթացի շնորհիվ:

5.Կատարե՞լ եք, արդյոք, ինքնուրույն որոնողական աշխատանք, հայթայթել լրացուցիչ նյութեր դասընթացի վերաբերյալ:

Այո

Ոչ

6.Ինչպե՞ս եք գնահատում ուսուցման այս ձևը:

Շատ լավ

Լավ

Բավարար

Վատ

7.Ի՞նչ առաջարկություններ կանեիք դասընթացի որակի բարելավման նպատակով:

ՀԱՐՑԱՇԱՐԸ № 6

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԻԶԱՎԱՅՐԻՑ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ

ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

Հարգելի, գործընկեր, մասնագիտական կրթության որակի ապահովման, կրթական վերջնարդյունքների ձեռքբերման և շրջանավարտների կարողունակությունների ձևավորման գործընթացների բարելավման նպատակով խիստ կարևոր են Ձեր անկեղծ գնահատականները բուհի կրթական միջավայրի, համապատասխան ենթակառուցվածքների ու ռեսուրսների վերաբերյալ, ինչի համար կանխավ շնորհակալ ենք: Հարցումն անանուն է: Բուհի ՈԱԿ

1. Խնդրում ենք ստորև ներկայացված հինգ բալանոց սանդղակով գնահատել հանալսարանի հետևյալ ռեսուրսներից ու ենթակառուցվածքներից Ձեր բավարարվածության աստիճանը.

Բոլորովին բավարարված չեմ -1---2---3---4---5- Լիովին բավարարված եմ

00- Դժվարանում եմ պատասխանել

Հ/հ	Անվանումը	Գնահատականը
1	Լսարանների վիճակ և կահավորվածություն	
2	Գրադարան	
3	Մարզադահլիճ	
4	Մանդի կետ	

5	Ձեռուցման համակարգ	
6	Ինտերնետ/վայֆայ կապ	
7	Կարբիներտների և լաբորատորիաների հագեցվածություն սարքավորումներով	
8	Բուժկետ	
9	Սանիտարահիգիենիկ պայմաններ	
10	Անվտանգություն	

2. Խնդրում ենք հինգ բալանոց սանդղակով գնահատել հանալսարանի հետևյալ կառույցներից Ձեր բավարարվածության աստիճանը.

Բոլորովին բավարարված չեմ -1---2---3---4---5- Լիովին բավարարված եմ

00- Դժվարանում եմ պատասխանել

Հ/հ	Անվանումը	Գնահատականը
1	Ռեկտորատ	
2	Գիտական խորհուրդ	
3	Ուսումնական վարչություն	
4	Ֆինանսատնտեսական/անձնակազմի կառավարման/վարչություն	
5	Դեկանատներ	
6	Ամբիոններ	
7	Որակի ապահովման կենտրոն	
8	Թրենինգ կենտրոն	
9	Միջազգային կապերի բաժին	
10	Կարիերայի և աշխատանքի տեղավորման կենտրոն	
11	Ուսանողական պառլամենտ	

3.Ի՞նչ եք կարծում, արդյոք բուհը ապահովում է դասախոսի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ ռեսուրսներ

1.Այո, լիովին

2.Ավելի շուտ այո

3.Մասամբ

4. Ավելի շուտ ոչ

5.Ոչ

00. Դժվարանում եմ պատասխանել

4. Ինչպե՞ս կբնութագրեիք դասախոս-ուսանող փոխհարաբերությունները բուհում

- 1. Համագործակցային
- 2. Ավելի շուտ համագործակցային
- 3. Անտարբեր, չեզոք
- 4. Ավելի շուտ հիերարխիկ
- 5. Հիերարխիկ

00. Դժվարանում եմ պատասխանել

5. Ձեր կարծիքով արդյո՞ք բուհն ապահովում է Ձեր աշխատանքին համարժեք վարձատրություն

- 1. Այո
- 2. Մասամբ
- 3..Ոչ

00. Դժվարանում եմ պատասխանել

6.Որքանո՞վ են Ձեր աշխատանքային իրավունքները պաշտպանված բուհում

- 1.Լիովին պաշտպանված են
- 2.Ընդհանուր առմամբ պաշտպանված են
- 3. Այնքան էլ պաշտպանված չեն
- 4. բոլորովի պաշտպանված չեն

00. Դժվարանում եմ պատասխանել

7. Ինչպե՞ս կբնութագրեիք աշխատանքային մթնոլորտը կոլեկտիվում

- 1. Առողջ
- 2.Ընդհանուր առմամբ առողջ
- 3. Ոչ այնքան առողջ
- 4. Անառողջ

00. Դժվարանում եմ պատասխանել

8. Արդյո՞ք Դուք կարող եք ազատ արտահայտել Ձեր դիրքորոշումը ներբուհական հարցերը քննարկելիս

- 8.1. Ամբիոնի նիստում 8.1.1. Այո 8.1.2. Ոչ 8.1.0. Դժվ. պատ.
- 8.2. Դեկանատում/ ֆակուլտետային խորհրդում 8.2.1. Այո 8.2.2. Ոչ 8.2.0. Դժվ. պատ.
- 8.3. Գիտական խորհրդի նիստերում 8.3.1. Այո 8.3.2. Ոչ 8.3.0. Դժվ. պատ.

9. Արդյո՞ք բուհի կառավարման համակարգում հաշվի է առնվում Ձեր կարծիքը

1. Այո, միշտ
2. Երբեմն
3. Հազվադեպ
4. Ոչ

00. Դժվարանում եմ պատասխանել

10. Եթե ունեք ուսումնական միջավայրի բարելավման հետ կապված առաջարկություններ և դիտողություններ, խնդրում ենք դրանք ազատ շարադրել ստորև.-----

ՀԱՐՑԱՇԱՐ N° 7

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

ՖԱԿՈՒԼՏԵՏ _____ ԿՈՒՐՍ _____

1. Որտե՞ղ եք անցկացրել պրակտիկան:

Կազմակերպության անվանումը _____

2. Ինչպիսի՞ արդյունավետություն ունեցավ պրակտիկան Ձեզ համար:

1. Լիովին արդյունավետ էր:
2. Արդյունավետ էր:
3. Այնքան էլ արդյունավետ չէր:
4. Բոլորովին արդյունավետ չէր:
5. Դժվարանում եմ պատասխանել:

3. Ի՞նչ տվեց Ձեզ պրակտիկան տվյալ կազմակերպությունում:

1. Պրակտիկ գիտելիքներ ստացա, որոնք հետագայում կկիրառեմ աշխատանքում:
2. Ուրախ ժամանակ անցկացրի:
3. Նոր ծանոթներ ձեռք բերեցի:
4. Ոչինչ էլ չտվեց, միայն ժամանակ կորցրի:
5. Այլ _____
6. Դժվարանում եմ պատասխանել:

4. Հնարավորության դեպքում, որտե՞ղ կցանկանայիք պրակտիկա անցնել:

1. Նույն կազմակերպությունում:
2. Մեկ այլ կազմակերպությունում:
3. Այլ _____
4. Դժվարանում եմ պատասխանել:

ՀԱՐՅԱՇԱՐ № 8

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Տակնուլտետ _____ Մասնագիտություն _____ Կուրս _____

1. Արդյո՞ք տեղյակ եք, որ Ձեր բուհում գործում է «Շրջանավարտների կարիերայի կենտրոնը»

ա . Այո

բ . Ոչ- անցնել հարց 7-ին

2. Երբևիցե դիմե՞լ եք կենտրոնին որևէ հարցով

ա . Այո

բ . Ոչ- անցնել հարց 7-ին

3. Ձեր դիմումը բավարարվե՞լ է

ա . Այո, լիովին

բ . Մասամբ

գ. Ոչ

4. Ի՞նչ պարբերականությամբ եք օգտվում կենտրոնի ծառայություններից

ա . Ամեն ամիս

բ . Ամեն եռամսյակ

գ. Վեց ամիսը մեկ

դ. Հազվադեպ

5. Որքա՞ն հաճախ եք թարմացնում Ձեր մասին տվյալները

ա . Ամեն ամիս

բ . Ամեն եռամսյակ

գ. Վեց ամիսը մեկ

դ. Ամեն տարի

ե. Չեմ թարմացնում

6. Ինչպե՞ս կզնահատեք կենտրոնի աշխատանքը

ա . Գերազանց

բ. Լավ

գ . Բավարար

դ. Անբավարար

ե. Դժվարանում եմ պատասխանել

7. Եթե ցանկանում եք պարբերաբար տեղեկություններ ստանալ կենտրոնի աշխատանքների մասին գրանցեք Ձեր էլեկտրոնային հասցեն -----

ՀԱՐՑԱՇԱՐՆԸ № 9

«ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ ԵՎ
 ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
 ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ

Հարգելի, գործընկեր, մասնագիտական կրթության որակի ապահովման, կրթական վերջարդյունքների ձեռքբերման և շրջանավարտների կոմպետենցիաների ձևավորման գործընթացների բարելավման համար, մեզ համար խիստ կարևոր է Ձեր կարծիքը՝ մեր բուհն ավարտած և այժմ Ձեր կազմակերպությունում աշխատող անձանց՝ մասին :

Կանխավ շնորհակալ ենք, «Հայրուսակ» համալսարանի որակի ապահովման կենտրոն:

1. Արդյո՞ք տվյալ մասնագետը Ձեր կազմակերպությունում անցել է.

1.1. Փորձաշրջան	
1.2. Վերապատրաստում	
1.3. Երկուսն էլ	
1.4. Ոչ	

2. Արդյո՞ք տվյալ աշխատակիցը կատարում է մասնագիտական աշխատանք.

2.1. Այո	
2.2. Մասամբ	
2.3. Ոչ	

3. Խնդրում ենք հինգ բալանոց սանդղակով գնահատել հանալսարանի շրջանավարտի հետևյալ որակներից Ձեր բավարարվածության աստիճանը.

Բոլորովին բավարարված չեմ-1----2-----3----4----5- Լիովին բավարարված եմ
 00- Դժվարանում եմ պատասխանել

Հ/հ	Անվանումը	Գնահատականը
1	Մասնագիտական գիտելիքներ	
2	Գործնական հմտություններ	
3	Թիմային աշխատանքի կարողություններ	
4	Համակարգչային գիտելիքներ	
5	Ընդհանուր զարգացման մակարդակ	
6	Օտար լեզուների իմացություն	
7	Կատարողական կարգապահություն	
8	Կատարելագործվելու և նոր գիտելիքներ ձեռք բերելու ձգտում	

5. Ի՞նչ առաջարկներ կանեք մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման և դրանք գործատուի պահանջներին առավելագույնս համապատասխանեցման համար

ՀԱՐՅԱՇԱՐ № 10

ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՈՒՍԱՆՈՂԻ ԱԶՔԵՐՈՎ

ՖԱԿՈՒԼՏԵՏ _____, ԿՈՒՐՍ _____

ՈՒՍ. ՏԱՐԻ _____, ԿԻՍԱՄՅԱԿ _____

Դասախոսի ազգանունը Հարցը						
Դասախոսը կարողանում է կառավարել լսարանը 1. Այո 2. Մասամբ 3. Ոչ						
Դասախոսը տիրապետում է առարկային և լիարժեք շարադրում է նյութը 1. Այո 2. Մասամբ 3. Ոչ						
Դասախոսը խթանում է ուսանողների հետաքրքրությունը առարկայի և ուսումնասիրվող նյութի նկատմամբ 1. Այո 2. Մասամբ 3. Ոչ						
Դասի ժամանակ հիմնականում խոսում է՝ 1-դասախոսը 2-ուսանողները 3-հավասարաչափ						
Դասախոսը խթանում է ուսանողների ինքնուրույ և որոնողական աշխատանքը 1. Այո 2. Մասամբ 3. Ոչ						
Դասախոսը խթանում է ուսանողների վերլուծական, համադրական և ստեղծագործական կարողությունները 1. Այո 2. Մասամբ 3. Ոչ						
Կցանկանայիք, որ դասախոսը շարունակեք ձեզ դասավանդել 1. Այո 2. Ոչ						

ՀԱՐՅԱՇԱՐ № 11

ԴԱՍԱԼՍՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ամսաթիվ՝ _____ 20____

Դասալսող՝ _____

Դասախոս՝ _____

Կուրս՝ _____

Մասնագիտություն՝ _____

Առարկա՝ _____

Թեմա՝ _____

Դասի տեսակ՝

- Դասախոսություն
- Գործնական պարապմունք
- Մեմինար
- Այլ՝ _____

1. Դասախոսի վերաբերմունքն ուսանողների նկատմամբ հարգալից է և բարեհամբույր՝

1.1.Այո

1.2.Ոչ (նշել կոնկրետ թերությունները) _____

2. Ուսանողները ներկայացել են դասին առանց ուշացման՝

2.1.Այո

2.2.Ոչ (քանի՞ րոպե ուշացավ ամենավերջում եկած ուսանողը) _____

3. Ուսանողների թիվը՝

3.1.Ներկա _____, 3.2.Բացակա _____

4. Պարապմունքի ժամանակ մասնակիցները չէին շեղվում և մյուսներին չէին խանգարում՝

4.1.Այո

4.2.Դասն ընդհատվում էր դասին չվրաբերող գործերի համար (քանի՞ անգամ, ի՞նչ տևողությամբ) _____

4.3.Ուսանողներն օգտագործում էին իրենց հեռախոսները կամ այլ սարքեր, զբաղված էին դասին չվերաբերող գործերով (քանի՞ ուսանող, ուսանողների քանի՞ տոկոսը) _____

5. Նկարագրել դասախոսի գործողությունները նախորդ հարցերում արձարծված վարքագծերից որևէ մեկի առկայության դեպքում՝

Բովանդակային չափանիշներ

6. Դասի համապատասխանությունը թեմատիկ պլանին

6.1.Այո

6.2.Հիմնականում

6.3.Ոչ

7. Մատուցված նյութի խտությունը՝

7.1.Մատուցված նյութը չափազանց ծավալուն էր, ուսանողները չեն կարող այն յուրացնել համապատասխան խորությամբ;

7.2.Մատուցված նյութը չափազանց սեղմ էր, դասաժամն արդյունավետ չօգտագործվեց;

7.3.Մատուցված նյութի խտությունը լիովին համապատասխանում էր առարկայի պահանջներին, կրթական ծրագրի խնդիրներին

7.4.Նոր նյութ չի մատուցվել, ստուգվել են միայն ուսանողների գիտելիքները և աշխատանքի արդյունքները;

7.5. Այլ _____

8. Ի՞նչ լրացուցիչ նյութեր, պարագաներ, միջոցներ է օգտագործում դասախոսը պարապմունքի ժամանակ՝

8.1. Ոչ մի նյութ, ամբողջ պարապմունքը հիմնված է դասախոսի բանավոր խոսքի վրա;

8.2. Դասի բովանդակությունը տպագիր հանձնվում է ուսանողներին;

8.3. Մուլտիմեդիա տարրեր (ֆիլմ, նկարներ, աուդիո նյութեր...);

8.4. Սլայդեր;

8.5. Մուլյաժներ, պլակատներ, քարտեզներ, ալբոմներ,

8.6. Գործիքներ, սարքավորումներ, հաստոցներ,

8.7. Հումք (գործվածք, ներկեր, կավ և այլն)

8.8. Ուսանողների պատրաստած նյութերը;

8.9. Այլ (մեկնաբանել)՝ _____

9. Ի՞նչ լեզվով/լեզուներով են ուսանողի ինքնուրույն աշխատանքի համար հանձնարարվող ուսումնական նյութերը՝

9.1. Հայերեն;

9.2. Ռուսերեն

9.3. Անգլերեն

9.4. Այլ լեզվով՝ նշել-----

10. Ուսանողների ներգրավվածությունը դասապրոցեսում (հնարավոր է մի քանի պատասխան)

10.1. Դասի կառուցվածքում ընդգրկված են պրակտիկ վարժություններ, առաջադրանքներ,

10.2. Ուսանողները աշխատում են գրատախտակի վրա,

10.3. Ուսանողները կատարում են թիմային վարժություններ,

10.4. Ուսանողները կատարում են անհատական աշխատանք,

10.5. Պարապմունքի մասնակիցները վերհիշում են նախկինում սովորած նյութը,

10.6. Այլ (նշել) -----

11. Խնդրում ենք 5բալանոց սանդղակով, որտեղ 5-ը լավագույն արդյունքն է, գնահատել հետևյալ գործողություններն ու տարրերը.

11.1	Ուսանողներն ուշադրությամբ լսում են դասախոսին	
11.2	Ուսանողները կատարում են գրառումներ	
11.3	Ուսանողները մասնակցում են դասին և ներգրավվում են քննարկումներին	
11.4	Դասը հետաքրքիր է	
11.5	Դասի կառուցվածքն ու բովանդակությունը համահունչ են էթիկայի կանոններին և համալսարանում ընդունված աշխատանքային սկզբունքներին	

11.6	Կիրառվում են գնահատման, դասավանդման, ուսումնասրության նորարարական մեթոդներ	
------	--	--

12. Կարծիք

Դասախոսի անուն, ազգանուն, ստորագրություն

ՀԱՐՑԱՇԱՐ № 12

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Հարգելի, ուսանող, դասընթացների/կրթական մոդուլների բովանդակության և ձևք բերվող վերջնարդյունքների որակի բարելավման նպատակով մեզ համար կարևոր է Ձեր անկողմնակալ կարծիքն ու ցանկությունները՝ տվյալ առարկայի վերաբերյալ:

Հարցումն անանուն է:

Կանխավ շնորհակալ ենք: Բուհի Որակի ապահովման կենտրոն

1. Խնդրում ենք նշել, թե տվյալ դասընթացի կարևորության մասին ստորև ներկայացված կարծիքներից ո՞րն է առավել մոտ Ձեր անձնական տեսակետին .

1. Չափազանց կարևոր է
2. Կարևոր է
3. Այնքան էլ կարևոր չէ
4. Բոլորովին կարևոր չէ

00. Դժվարանում եմ պատասխանել

2. Խնդրում ենք հինգ բալանոց սանդղակով գնահատել դասընթացի արդյունքներից Ձեր բավարարվածության աստիճանը.

Բոլորովին բավարարված չեմ -1---2---3--4---5- Լիովին բավարարված եմ

00. Դժվարանում եմ պատասխանել

3. Ի՞նչ խորության գիտելիքներ տվեց Ձեզ դասընթացը.

1. Նվազագույն գիտելիքներ
2. Ընդհանուր պատկերացում առարկայի մասին
3. Խորը, ամբողջական գիտելիքներ

00.Դժվարանում եմ պատասխանել

4. Ձեր կարծիքով ի՞նչ պետք է սովորեիք այս դասընթացի յուրացման դեպքում.

5. Դուք գ ո՞հ եք Ձեր աշխատանքից.

- 1. Այո
- 2. Մասամբ
- 3. Ոչ

6. Դուք գ ո՞հ եք դասախոսի աշխատանքից.

- 1. Այո
- 2. Մասամբ
- 3. Ոչ

7.Արդյո՞ք Դուք նախապես ծանոթ էիք դասընթացի ծրագրին.

- 1. Այո
- 2. Մասամբ
- 3. Ոչ

8. Ձեր կարծիքով հետևյալներից ո՞ր քայլերը կարիք կա կիրառելու այս դասընթացի համար.

- 1. Ավելացնել ծավալը
- 2. Կրճատել ծավալը
- 3. Փոփոխել թեմաները
- 4. Փոփոխել դասավանդման մեթոդները
- 5. Կիրառել ուսուցման օժանդակ միջոցներ
- 6. Դասընթացը փոխարինել մեկ ուրիշով

7.Այլ՝ նշել-----

00.Դժվարանում եմ պատասխանել

9.Խնդրում ենք հիմնավորել Ձեր տեսակետները՝

- 1. Ավելացնել ծավալը-----
- 2. Կրճատել ծավալը-----
- 3. Փոփոխել թեմաները-----
- 4. Փոփոխել դասավանդման մեթոդները-----
- 5. Կիրառել ուսուցման օժանդակ միջոցներ-----
- 6. Դասընթացը փոխարինել մեկ ուրիշով-----

7.Այլ՝ նշել-----

10. Ինչպե՞ս կրնութազրեիք դասընթացին՝ ուսանողների հաճախումների աստիճանը .

1. Բարձր
2. Լավ
3. Միջին
4. Անբավարար

00.Դժվարանում եմ պատասխանել

11. Ինչպե՞ս կրնուիթագրեիք դասընթացին՝ ուսանողների մասնակցությունը:
Արդյո՞ք Դուք կարող եք ազատ արտահայտել Ձեր դիրքորոշումը, հարցեր տալ, մասնակցել քննարկումներին:

1. Այո
2. Ոչ

00. Դժվ. պատ.

12.Արդյո՞ք Դուք օգտվում եք մասնագիտական գրականությունից՝ դասընթացի յուրացման նպատակով

1. Այո
2. Ոչ

13.Խնդրում ենք հիմնավորել Ձեր տեսակետը՝ նշելով օգտագործված որոշ աղբյուրներ կամ պարզաբանել մասնագիտական գրականությունից չօգտվելու պատճառները.

14. Ի՞նչ առաջարկություններ ունեք կապված այս դասընթացի հետ.

ՀԱՐՑԱՇԱՐՔ № 13

*ԲՈՒՀՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ*

Հարգելի բարեկամ, մենք կցանկանայինք իմանալ Ձեր կարծիքը մեր բուհում մատուցվող կրթական ծառայությունների որակի և արդյունավետության մասին, որի համար խնդրում ենք անկեղծորեն պատասխանել հետևյալ հարցերին: Հարցումն անանուն է, Ձեր պատասխանները օգտագործվելու են միայն ընդհանրացված ձևով:

- 1) Ասացեք խնդրեմ, ինչու՞ ընտրեցիք այս բուհը:
 - 1.1. Ելնելով իմ նախասիրություններից
 - 1.2. Ծնողներիս խորհրդով
 - 1.3. Ընկերների, ծանոթների, բարեկամների խորհրդով
 - 1.4. Այլ, նշել -----

2) Արդյո՞ք արդարացի, բաց ու թափանցիկ էին բուհ ընդունվելու գործընթացները:

- 2.1. Այո, լիովին —————> անցնել 4-րդ հարցին
- 2.2. Մասամբ —————> անցնել 3-րդ հարցին
- 2.3. Ոչ —————> անցնել 3-րդ հարցին

3) Խնդրում ենք մանրամասնել ձեր տեսակետը. ինչու՞ եք այդպես կարծում . -----

4) Խնդրում ենք ըստ ստորև ներկայացված սանդղակի, որտեղ 1-ը նվազագույն, իսկ 5-ը՝ առավելագույն ցուցանիշն է, գնահատել բուհի մատուցած կրթական ծառայությունների հետևյալ բաղադրիչների որակը.

Անբավարար -1---2---3--4---5- Գերազանց

00- Դժվարանում եմ պատասխանել

No	Կրթական ծառայությունների բաղադրիչները	Գնահատականը
1	Բուհի ենթակառուցվածքների և ռեսուրսների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանությունը	
2	Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական ու մանկավարժական կարողությունները	
3	Բուհի վարչական անձնակազմի արհեստավարժությունը	
4	Մասնագիտության կրթական ծրագրի բովանդակությունը	
5	Կրթական միջավայրը /միջանձնային և միջխմբային հարաբերությունները	
6	Գնահատման համակարգի անաչառությունը	
7	Հետազոտական աշխատանքներին մասնակցելու հնարավորությունը	
8	Պրակտիկաների կազմակերպումը	
9	Ուսանողական հասարակական կազմակերպությունների գործունեությունը	
10	Միջազգային շարժունությունը	
11	Այլ, նշել	

5) Արդյո՞ք Դուք համարում եք, որ բուհում ստացած կոմպետենցիանները Ձեզ թույլ են տալիս կատարել մասնագիտական աշխատանք:

- 5.1. Այո, լիովին
- 5.2. Մասամբ
- 5.3. Ոչ, անհրաժեշտ է անցնել լրացուցիչ վերապատրաստումներ

6) Արդյո՞ք Դուք հնարավորություն ունեցել եք ներգործել կրթական ծրագրերի բովանդակության վրա, ինքնուրույն ընտրել որևէ դասընթաց, որևէ դասախոսի:

- 6.1. Այո
- 6.2. Ոչ

7) Արդյո՞ք ուսումնառության ընթացքում առնչվել եք անարդարությունների, հովանավորչության կամ կոռուպցիոն դեպքերի

7.1. Այո/եթե կարող եք՝ նշեք, ինչպիսի դեպքեր են եղել-----
-----/

7.2. Ոչ

8) Ի՞նչ առաջարկություններ, ցանկություններ ունեք, որոնք կօգնեն բարելավել կրթության որակը մեր բուհում.-----

9) Ձեր սեռը.	9.1. Արական,	9.2. Իգական		
10) Ձեր տարիքը.	10.1. մինչև 22	10.2. 23-26	10.3. 27-30	10.4. 31 և ավելի

6.4. ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ¹¹

1. Ներածություն

Կրթության որակի ապահովումը «Հայբուսակ» համալսարանի ռազմավարական ծրագրի առաջնահերթ նպատակն է, որը նպաստում է նրա կայացմանը և մրցունակության բարձրացմանը: Այսօր այդ նպատակի ձեռքբերման համար, միջազգային մակարդակով, որպես գործուն մեխանիզմ է ծառայում բենչմարկինգը: Այն մեզանում նոր երևույթ է և կիրառության մեջ է մտել կրթական բարեփոխումների ներկա փուլում, երբ բուհերն անցնում են ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման գործընթաց: Այդ պայմաններում խիստ արդիական է կրթության որակական ցուցանիշների ապահովման, դասավանդողների ու ուսանողների միջազգային շարժունության կարողությունների ապահովման տեսլականից ելնելով՝ որոնել, գտնել նմանատիպ գիտակրթական գործունեություն ծավալող արտերկրի բուհեր և համագործակցել նրանց հետ, ուսումնասիրել նրանց փորձը և լավագույնը փոխառել, ներդնել սեփական բուհում: Այս քայլի իրականացումը թույլ կտա ոչ միայն բարելավել կրթության որակն ու արդյունավետությունը, այլև նպատակային օգտագործել առկա ռեսուրսներն ու ներուժը:

Այս փաստաթղթի կազմումն ու ընդունումը լիովին համապատասխանում է «Հայբուսակ» համալսարանի ռազմավարական ծրագրի ոգուն և հիմնվում է ՀՀ Կառավարության կողմից իրականացվող ՈԱՇ-ի սկզբունքների վրա:

2. Բենչմարքինգի քաղաքականության էությունն ու նպատակը

Բենչմարքինգը (benchmark- հաշվարկի սկիզբ, էտալոնային համեմատություն, չափանիշ) գործունեություն է ուղղված բիզնեսի կառավարման լավագույն օրինակների որոնմանը, գնահատմանը և յուրացմանը: Այսօր այն համարվում է կրթության ոլորտում արդյունավետ գործիք, որը կիրառվում է առաջատար դիրքի հասնելու համար: 2002թ. Որակի ապահովման եվրոպական ցանցի (ENQA) սեմինարի ընթացքում բենչմարքինգը սահմանվել է որպես

¹¹ Հաստատվել է ԵՀՀ ռեկտորի կողմից 24.06.2015թ.:

ուսումնասիրության գործընթաց, որը պահանջում է վստահություն, ըմբռնողություն, կատարելագործման նպատակով լավագույն փորձի ընտրություն և ադապտացում:

Բենչմարքինգի ներքո մենք հասկանում ենք համանման գործունեություն իրականացնող միջազգային ճանաչում գտած բուհի առաջավոր փորձի համեմատական ուսումնասիրություն՝ ողջ առաջավորը, արդիականը, արդյունավետը բուհում ներդնելու համար:

Մենք առաջնորդվել ենք Ռոբերտ Քեմփի (Robert Camp) կողմից մշակված բենչմարկինգի անցկացման մեթոդաբանությամբ, որը ենթադրում է այսպիսի քայլերի իրականացում.

1. Բենչմարքինգի օբյեկտի ընտրություն,
2. Բենչմարքինգի գործընթացի որոշում,
3. պոտենցիալ գործընկերների հայտնաբերում,
4. տեղեկությունների աղբյուրների որոշում,
5. տվյալների հավաքագրում և գործընկերների ընտրություն,
6. Բենչմարքինգի՝ լավագույն և վատթարագույն օբյեկտների ցուցանիշների միջև տարբերությունների որոշում,
7. տարբերությունների ներդրում գործընթացի մեջ,
8. արդյունքների ապագա ներդրման նպատակի որոշում,
9. Բենչմարքինգի մասնակիցների միջև շփումներ,
10. Բենչմարքինգի նպատակի ճշգրտում,
11. ներդրումներ,
12. արդյունքների ամփոփում և վերստուգում:

Վերոհիշյալ մեթոդաբանությունից ելնելով՝ մենք մշակել ենք մեր կողմից իրականացվելիք գործողությունների հետևյալ շարքը.

1. Բենչմարկինգի օբյեկտի ընտրություն,
2. Բենչմարկինգի գործընթացի որոշում,
3. պոտենցիալ գործընկերների հայտնաբերում և փոխապայմանավորվածության ձեռքբերում,
4. տեղեկությունների աղբյուրների որոշում և տվյալների հավաքագրում,
5. Բենչմարկինգի արդյունքների մասին տեղեկատվության ապահովում շահագրգիռ կողմերին, բենչմարքինգի էթիկայի նորմերի պահպանում,
6. Բենչմարքինգի լավագույն և վատագույն ցուցանիշների համադրում՝ մրցունակության և արդյունավետության տեսանկյունից,
7. արդյունքների ներդրման նպատակի և նպատակահարմարության որոշում,
8. տարբերությունների ներդրում բուհում,
9. արդյունքների վերլուծություն, ամփոփում և մոնիթորինգ:

Մեր բուհի պարագայում այսօր առավել հրատապ է կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացումը, սակայն ինչպես այս, այնպես էլ բուհի գործունեության մյուս ոլորտների համար կիրառելի է նույն մոտեցումը:

«Հայբուսակ» համալսարանի քաղաքականության էությունն է ձևավորել և զարգացնել որակի ապահովման համապատասխան մեխանիզմներ՝ ԵՄ երկրների համանման կրթօջախների փորձի ուսումնասիրության, համեմատության, նորի, արդիականի, առաջավորի ու արդյունավետի բացահայտման համար՝ բուհում ներդնելու, բուհի մրցունակությունը բարձրացնելու նպատակով: Այդ քաղաքականությունն ու դրա իրականացման ընթացակարգը իրենցից ներկայացնում են բուհի գործունեության որակական ցուցանիշների արմատական բարելավման կարևորագույն լծակ:

3. Բենչմարքինգի սկզբունքները

Համալսարանի կողմից իրականացվող բենչմարքինգի ծրագրերի իրականացման սկզբունքները բխում են «Բենչմարքինգի իրականացման ժամանակ վարքի եվրոպական կոդեքսից»: Մեր կողմից սահմանվել են հետևյալ սկզբունքները.

1. Համապատասխանություն՝ բուհի ռազմավարական ծրագրին (առաքելությանը),
2. մանրակրկիտ նախապատրաստություն,
3. շփման կուլտուրա,
4. ինֆորմացիայի փոխանակում,
5. փոխշահավետություն,
6. անալոգիա,
7. լեզավություն,
8. համադրելիություն,
9. արժանահավատություն,
10. արդյունավետություն,
11. ավարտունություն (ճշտապահություն),
12. տեղեկատվության գաղտնիություն,
13. նպատակային կիրառություն,
14. ըմբռնողություն և համաձայնություն,
15. մրցակիցների հետ փոխհարաբերությունների կանոնակարգում,
16. վերահսկելիություն:

4. Բենչմարքինգի համար համագործակցող ՄՈՒՀ-երի ընտրության չափանիշները

Գոյություն ունեն բենչմարքինգի մի շարք տեսակներ՝ ներքին, մրցակցային, ֆունկցիոնալ ընդհանուր, գործընթացի ծախսերի բենչմարքինգ և այլն: Այս կամ այն ձևի ընտրությունը

կախված է տվյալ ձեռնարկության առանձնահատկություններից և բենչմարքինգի իրականացման նպատակից:

Բենչմարքինգի գործընթացում կարևորվում են հետևյալ փուլերը.

ա/ Վերլուծության օբյեկտ ծառայող առավելության որոշում: Կարելի է կազմակերպությունն ամբողջապես կամ մասնակիորեն վերլուծության առարկա դարձնել, դիտարկել այն ներքին կամ արտաքին տեսանկյունից և այլն:

բ/ Գործընկերների որոնում: Որպես այդպիսիք՝ կարող են ծառայել ոլորտի լավագույն հաստատությունները, որոնք համեմատելի են սեփական բուհի հետ: Այս փուլը ենթադրում է հետևյալ քայլերի իրականացում.

- Հպանցիկ որոնում(to skim), ուրվագծում, մատչելի աղբյուրներից տեղեկությունների հավաքում,

- Տեղեկությունների կարգավորում(to trim), համակարգում,

- Լավագույների առանձնացում(to cream), գործընկերների ընտրություն:

Լավագույն գործընկեր համարվող բուհը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին.

1/ Ունենա որակի ապահովման քաղաքականություն և դրա իրականացման մեխանիզմներ,

2/ Լինի համադրելի ուսանողների, դասախոսների, կարողությունների, ռեսուրսների, առաքելության և խնդիրների առումով,

3/ Հետաքրքրված լինի բենչմարքինգի իրականացման գործընթացով,

4/ Ունենա բարձրագույն կրթության գործընթացների բարելավման և առաջավոր փորձի ուսումնասիրության և ներդրման փորձ և լուրջ որակական ձեռքբերումներ:

գ/ Տեղեկատվության հավաքում, որակական ու քանակական տեղեկությունների ձեռքբերում, աշխատանքի բովանդակության, արդյունավետությունը ապահովող գործոնների ուսումնասիրություն: Տեղեկատվության հավաքումը ներառում է մի շարք հարցերի լուծում. Հարցաշարերի մշակում, սեփական բուհի՝ ուշեղ և թույլ կողմերի մասին տեղեկությունների ճշգրտում, գործընկեր կազմակերպության մասին և հիմնախնդրի մասին լրացուցիչ աղբյուրներից տեղեկությունների ձեռքբերում, դրանց հավաստիության ստուգում:

դ/ Ունեցած տեղեկությունների վերլուծություն, տարբերությունների, ընդհանրությունների բացահայտում, ընդօրինակելու, կիրառման արժանի առավելությունների առանձնացում, պատկերի հստակեցում:

ե/ Ձեռք բերված արդյունքների կենսագործման հիման վրա՝ բուհի գործունեության բարելավում, որը պետք է կատարվի ոչ թե դրանց կույր ընդօրինակման, պարզ պատճենման, այլ


բուհի առանձնահատկությունները հաշվի առնելու, համալսարանում կոնկրետ տեղայնացնելու միջոցառումներ մշակելու, քայլերը պլանավորելու, հետևանքները և հետագա նորարարական հեռանկարները կանխատեսելու ճանապարհով:

զ/ Գործընթացի գնահատում և վերահսկողություն: Այս հարցում անհրաժեշտ է կարևորել բուհի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերով սահմանված արդյունքների ձեռքբերումը, պահանջվող ռեսուրսները, միջոցները, նախանշված ժամկետները:

5. Բենչմարքինգի իրականացումն ու կատարումը

- Բենչմարքինգի իրականացումը կատարվում է համագործակցող հաստատության /հաստատությունների հետ՝ բենչմարքինգի առարկայի, փոխանակվող տեղեկատվության շրջանակի, յուրաքանչյուր հաստատության ներկայացուցիչների իրավասությունների վերաբերյալ կնքված պայմանագրի հիման վրա:
- Բենչմարքինգի իրականացումը կատարվում է համալսարանի՝ Որակի ապահովման կենտրոնի կողմից՝ ռեկտորատի որոշման հիման վրա:
- Բենչմարքինգի իրականացման վերահսկողությունն ու ընդհանուր ղեկավարությունը իրականացնում է՝ համապատասխան ոլորտն համակարգող պրոռեկտորը:
- Պահանջվող ծախսերը հոգալու նպատակով՝ միջոցների հատկացումը ֆինանսական վարչության ներկայացմամբ, կատարվում է համակարգող պրոռեկտորի ներկայացմամբ՝ ռեկտորի հրամանով: Իսկ եթե կան ֆինանսավորման այլ աղբյուրներ, համակարգող պրոռեկտորի կողմից դրանց մասին կազմվում է համապատասխան զեկուցագիր և ներկայացվում ռեկտորատ:
- Բենչմարքինգի արդյունքների մասին բենչմարքինգն իրականացրած խմբի ղեկավարի կողմից հաշվետվություն է ներկայացվում համակարգող պրոռեկտորին:
- Բենչմարքինգի արդյունքների հիման վրա՝ Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվում, համակարգող պրոռեկտորի հետ քննարկվում և ռեկտորատ է ներկայացվում միջոցառումների ծրագիր՝ ուղղված ուսումնասիրված խնդիրների լուծմանը և նոր գործընթացների ներդրմանը:
- Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին (հուլիս-օգոստոս ամիսներին), համալսարանի յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար ներկայացնում է բենչմարքինգի ուղղությամբ կատարված արդյունքների հաշվետվություն:

6.4ժ. 1. Բենչմարքինգի գործընթացի սխեման.



6.5. ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍՍԻՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

№	Հարց	Պատասխան
1	Պատասխանատուները	1. ՈԱԿ տնօրենը 2. Հարցումների գծով բաժնի վարիչը 3. ՈԱԿ գլխավոր մասնագետը 4. Որակի կենտրոնի համակարգողը

2	Իրականացնողները /մեթոդական մաս	Դեկանատները, ամբիոնները, հարցումների գծով բաժնի վարիչը
3	Հետազոտության նպատակը	Բարձրացնել համալսարանի պրոֆեսորա- դասախոսական անձնակազմի մասնագի- տական և մանկավարժական որակները:
4	Կապը ռազմավարական նպատակների կամ կապը հավատարմագրման չափանիշների հետ	<p>2010-2015թթ. և նախորդ տարիների (մասնա- վորապես 2007-2009թթ.) զարգացման ռազմա- վարական ծրագրերի համաձայն՝ ԲՈՒՀ-ը համալրվում է որակյալ կադրերով: Ռազմա- վարական այս խնդիրն իրագործելու համար՝ ԲՈՒՀ-ն իրականացնում է դասախոսական անձնակազմի բազմաչափ գնահատում՝ ըստ մասնագիտական պատրաստության, մանկա- վարժական վարպետության և անձնական որակի:</p> <p>ԲՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանջ- ները առաջին հերթին ձևավորվում են տվյալ մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերին համապատասխանող կրթական չափորոշիչներով, որոնք բխում են ՀՀ ՈԱՇ-ի պահանջներից՝ վեցերորդ (բակալավրի) և յոթերորդ (մագիստրոսի) մակարդակի շրջա- նավարտներին բնորոշող գիտելիքների, հմտու- թյունների և կարողությունների ծավալով, ինչպես նաև ԲՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսա- կան և ուսումնասօժանդակ անձնակազմի պար- տականությունների պահանջներից:</p> <p>Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակները պարբերաբար</p>

		<p>ստուգվում են ամբիոնների վարիչների, ինչպես նաև կրթության որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող դասալսումների, դասամատյաններում դասախոսների կողմից կատարված լրացումների միջոցով:</p> <p>Դասախոսների մասնագիտական պատրաստության և մանկավարժական վարպետության գնահատման համար կարևոր դեր են խաղում ուսանողների մոտ անցկացվող՝ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցումները, որոնց արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:</p>
5	<p>Գործիքի նպատակները, խնդիրները (ինչ ենք ուզում պարզել, գնահատել, բարելավել, փոփոխել)</p>	<p>Նպատակն է բարձրացնել դասախոսների կարողությունները, գիտելիքները, հմտությունները: Խրախուսել նաև դասավանդման զանազան մեթոդների կիրառումը՝ բանավեճեր, ինտերակտիվ մեթոդներ, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ: Անցկացնել դասախոսների վերապատում՝ մասնագիտական կարողությունները, մանկավարժական վարպետությունը և օտար լեզվի իմացությունը բարձրացնելու ուղղությամբ:</p>
6	<p>Օբյեկտը, առարկան, հասկացությունները, մեթոդի հիմնավորումը, գործիքի նկարագրությունը (քանի՞ կետերից և հարցերից է բաղկացած, որ հարցերն են փակ և որոնք են բաց, ինչ՞ խնդիրներ է պարունակում ...</p>	<p>Հետազոտության օբյեկտը դասախոսն է, իսկ առարկան՝ նրա մասնագիտական որակների բարձրացումը:</p> <p>Գործիքի նկարագրությունը (տե՛ս կցված հարցաշարում):</p>

7	Կիրառման հաճախությունը	Առկա ուսուցման համակարգում ուսանողական հարցումն իրականացվում է հոկտեմբեր-նոյեմբեր և մարտ-ապրիլ ամիսներին, հեռակա ուսուցման համակարգում՝ նոյեմբեր ամսին: Ավարտական կուրսերում 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ մինչև ամփոփիչ քննությունների սկիզբը:
---	------------------------	--

6.6. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԴԱՄԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ¹²

ա/ Ընդհանուր դրույթներ

Առաջնորդվելով Երևանի «Հայբուսակ» համալսարանի կրթության որակի վերահսկողության և բարելավման ռազմավարական խնդրի լուծման պահանջով, որն ամրագրված է նաև ամբիոնների կողմից դասալսումների կազմակերպման ու անցկացման դրույթում, սույնով սահմանվում է բուհում դասալսումների իրականացման և արդյունքների ամփոփման կարգը:

բ/ Դասալսումների կազմակերպման պատասխանատուները

Դասալսումների կազմակերպման պատասխանատուները հանդիսանում են ֆակուլտետների ղեկանները /ամբիոնների վարիչները:

գ/ Դասալսումների անցկացման և արդյունքների քննարկման կազմակերպումը

Դասալսումներն իրականացվում են՝ համաձայն ամբիոնի աշխատանքային պլանով սահմանված ժամանակացույցի:

Արտահերթ դասալսումներն անցկացվում են բուհի՝ կրթության որակի ապահովման կենտրոնի կողմից անցկացված հարցումների արդյունքների հիման վրա՝ ռեկտորի հրամանով կամ գիտխորհրդի որոշմամբ՝ սահմանված ժամանակացույցով:

Դասալսում անցկացնելու մասին ամբիոնի վարիչը պարտավոր է դասախոսին տեղեկացնել դասալսումից մեկ շաբաթ առաջ:

Դասալսմանը մասնակցում են ամբիոնի վարիչը, ղեկանը/ղեկանի տեղակալը, անհրաժեշտության դեպքում՝ տվյալ առարկայի մասնագետ, ՈԱԿ-ի ներկայացուցիչը:

¹² Հաստատված է ԵՀՀ ռեկտորի կողմից 14.03.2014թ.:

Յուրաքանչյուր դասալսման արդյունքները դասալսումն ավարտելուց հետո անմիջապես քննարկվում է ամբիոնում, որի մասին կազմվում է արձանագրություն և վավերացվում դասալսումն իրականանողների կողմից:

Քննարկման ընթացքում արձանագրվում են դասախոսի կողմից կիրառվող դասավանդման մեթոդները, թեմայի նյութի խորությունն ու ամբողջականությունը, դասախոսի մանկավարժական կարողություններն ու հմտություններըն այլն:

Դասալսումների արդյունքները նպաստում են դասախոսների որակավորման բարձրացման ոլորտում առկա խնդիրների վերհանմանը, առաջավոր փորձի փոխանակմանը, մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների զարգացմանը:

Դասալսումների արդյունքները անդրադառնում են, դասախոսների հետ, պայմանագրերի կնքման և վարձատրության չափի սահմանման վրա:

6.7. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ¹³

ԵՐԵՎԱՆԻ ԷՆՅԱՆՈՒՄԱԿՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Պրոռեկտոր, գիտ. աստ., կոչում

_____ Ա.Ա.Հ.

!_____§ _____201 թ.

Քննարկվել և ընդունվել է

գիտական խորհրդի կողմից

!_____§ _____201 թ.

թիվ _____ նիստում

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Դասընթացի նկարագիր

Քննարկվել է _____ ամբիոնի

_____/_____/_____ 20 թ. թիվ _____ նիստում

Գրախոս՝ _____ Ա.Ա.Հ., գիտ աստ., կոչում

Մասնագիտության կրթական ծրագիրը	<i>նշել, որ ՄԿԾ-ի համար է նախատեսված դասընթացը</i>
Կարգավիճակը	<i>դասընթացի տիպը՝ պարտադիր կամ կամընտրական</i>
Նախնական պահանջները	<i>նշել, թե դասընթացի համար ուսանողը ի՞նչ նախնական դասընթացներ պետք է անցած լինի</i>

¹³ Ընդունվել է ԿՄԱ ԵՀՀ Գիտխորհրդի 28.04.2017թ. թիվ 4 նիստում:

Կուրս, կիսամյակ	<i>նշել, թե դասընթացը որ կուրսում և կիսամյակում է դասավանդվում</i>
Ուսումնական բեռնվածությունը (կրեդիտ)	<i>նշել դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը ըստ մոդուլների</i>
Դասախոս/Ա.Ա./	
Գիտական աստիճան, կոչում	
Հասցե	Երևան 0038, Հալաբյան 6, --- հարկ, սենյակ No
Հեռ.	+374
Էլ. փոստ	
Ընդունելության ժամերը	ըստ նախնական պայմանավորվածության

Ժամերի բաշխվածությունը		
ա. Լսարանային ժամերը		
	դասախոսություն	<i>Ժամաքանակը</i>
	գործնական պարապմունք	<i>Ժամաքանակը</i>
	սեմինար պարապմունք	<i>Ժամաքանակը</i>
	լաբորատոր աշխատանք	<i>Ժամաքանակը</i>
	ամփոփիչ գնահատում/ քննություն, ստուգաք	<i>Ժամաքանակը</i>
	այլ / կոնսուլտացիա, լրացուցիչ պարապմունք	<i>Ժամաքանակը</i>
բ. Ինքնուրույն ժամերը		
	կուրսային աշխատանք, նախագիծ	<i>Ժամաքանակը</i>
	արվեստանոցային	<i>Ժամաքանակը</i>
	ընթերցանություն, աշխատանք համացանցում	<i>Ժամաքանակը</i>
	հանձնարարություններ	<i>Ժամաքանակը</i>
	այլ / ռեֆերատներ, էսսեներ, պորտֆոլիոներ/	<i>Ժամաքանակը</i>

I. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ

Նշել դասընթացի ընդհանուր նպատակը, որը պետք է նպաստի մասնագիտության կրթական ծրագրի ընդհանուր նպատակի իրականացմանը

II. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Թվարկել դասընթացի ուսումնառության վերջնարդյունքները, որոնց պետք է ուսանողը հասնի դասընթացը հաջող ավարտելիս և որոնք պետք է բխեն դասընթացի նպատակից ու համահունչ լինեն սովորյալ մասնագիտության կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին
(թվարկել առավելագույնը 8 ուսումնառության վերջնարդյունքներ)

III. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացնել գնահատման քաղաքականությունը

Գնահատման չափանիշները

Չափանիշ	Բաղադրիչ	Գնահատականը, %
Ընդհանրական և մասնագիտական գիտելիք և ըմբռնում		
Մասնագիտական կիրառական, փոխանցելի և փոխկիրառելի կարողություններ		

Ներկայացնել գնահատման սանդղակը

Նշել քննական կանոնները և ակադեմիական էթիկայի պահանջները

IV. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

V. ԴԱՍԸՆԹԱՅԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Նշել դասընթացի / մոդուլի¹⁴ թեմաները

Ներկայացնել լսարանային ժամերի օրացույցային պլանը

ԹԵՄԱ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

¹⁴ Յուրաքանչյուր մոդուլի համար կազմվում է առանձին թեմատիկ պլան

VI. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

*Նշել դասընթացը կազմակերպելու անհրաժեշտ միջոցները
Նշել դասընթացի համար անհրաժեշտ գրականության ցանկը*

6.8. ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՄԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹⁵

Համալսարանի ուսանողների իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ («Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 49, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 17, 3-րդ կետ):

Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները սահմանելիս հիմք են ծառայել նաև «Հայրուսակ» համալսարանի կանոնադրության, ռազմավարական ծրագրի պահանջները, որոնց կարևորագույն նպատակը համապատասխան գիտելիքներով, հմտություններով, կարողություններով օժտված մասնագետի, մարդու և քաղաքացու ձևավորումն է:

Ուսանողն իրավունք ունի՝

- սեփական հայեցողությամբ ընտրելու մասնագիտությունը, ուսուցման ձևը, ստանալու միջազգային կրթական չափորոշիչներին համապատասխանող գիտելիքներ, կարողություններ, հմտություններ,
- հաճախելու համալսարանում անցկացվող պարապմունքներին, մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,
- ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերող կանոնակարգերին,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է համալսարանում կամ այլ բուհում՝ այդ բուհի սահմանած կարգով և պայմաններով,
- օգտվելու համալսարանի գրադարանից, տեղեկատվական պահոցներից, լաբորատորիաներից, կաբինետներից, ուսումնական, գիտական, մարզական, առողջապահական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու բուհի ամբիոնների գիտահետազոտական ծրագրերին, գիտաժողովներին, սեմինարներին,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը,

¹⁵ Հաստատված է ԵՀՀ ռեկտորի կողմից 15.06.2015թ.:

- ընտրելու և ընտրվելու համալսարանի կառավարման մարմիններում, ուսանողական հասարակական կազմակերպություններում , մասնակցելու դրանց աշխատանքներին, հանդես գալու առաջարկություններով,
- քննաշրջանի ժամանակացույցում, քննությունների և ստուգարքների օրերի և հերթականության որոշման ժամանակ, ներկայացնելու առաջարկություններ,
- բողոքարկելու համալսարանի ղեկավարության որոշումները, հրամաններն ու կարգադրությունները, քննությունների, այդ թվում՝ ամփոփիչ ատեստավորման արդյունքները,
- օգտվելու ուսման վարձի զեղչերից, ստանալու կրթաթոշակներ, դրամաշնորհներ,
- օգտվելու տարկետման իրավունքից՝ մինչև մեկ տարի ժամկետով,
- տվյալ ուսումնական տարվա ընթացքում, առնվազն երկու անգամ, օգտվել արձակուրդից, ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ, այդ թվում երկու շաբաթ՝ ձմռանը,
- փոխադրվելու մեկ այլ, ներառյալ օտարերկրյա բուհ, միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում՝ ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ՝ ներառյալ օտարերկրյա բուհում,
- օրինակելի վարքի, ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար արժանանալու բարոյական և/կամ նյութական խրախուսանքի,
- ընտրելու տվյալ մասնագիտության(մասնագիտացման) ուսուցման համար բուհի կողմից առաջադրվող պարտադիր և կամընտրական դասընթացներ՝ կրթական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միևնույն դասընթացի համար մեկից ավելի ուսումնական խմբերի առկայության դեպքում կատարելու ընտրություն՝ ելնելով դասախոսին տրված նախապատվությունից և/կամ դասընթացի կայացման ժամանակացույցից,
- սահմանված կարգով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ կազմված ուսումնառության լրիվ կամ որևէ շրջանի համար,
- համալսարանի հետ, ուսումնառության պայմանների վերաբերյալ, կնքելու պայմանագիր:

Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ համալսարանի կանոնակարգերին և խստորեն հետևել դրանց պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները, ուսումնական պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները,
- կանոնավոր հաճախել ուսումնական ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,
- ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում հանձնել բոլոր ստուգարքներն ու քննությունները,
- հոգատարությամբ վերաբերվել համալսարանի գույքին, քանզի համալսարանի գույքին պատճառված վնասի համար ուսանողը կրում է նյութական պատասխանատվություն,
- լինել կարգապահ, համալսարանի տարածքում, ուսումնական, ուսումնաարտադրական և այլ շենքերում պահպանել մաքրություն,
- պահպանել հասարակության բարոյական նորմերը, համալսարանի էթիկայի կանոնները, ձեռնպահ մնալ գրագողությունից,
- հոգ տանել համալսարանի պատվի ու հեղինակության մասին,
- պատասխանատվություն ստանձնել՝ իր կողմից ընտրված դասընթացների ժամերի համընկման համար,
- ժամանակին վճարել ուսման վարձը,
- հարգելի պատճառով, ուսումնական պարապմունքներին չներկայանալու դեպքում, այդ մասին տեղյակ պահել ֆակուլտետի ղեկանին, իսկ համալսարան ներկայանալու առաջին իսկ օրը՝ տվյալներ ներկայացնել պարապմունքներին չմասնակցելու պատճառների մասին,
- հիվանդության դեպքում, ֆակուլտետի ղեկանին, ներկայացնել համապատասխան փաստաթուղթ:

6.9. ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՄԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

1. Բուժական գործ
2. Ստոմատոլոգիա
3. Դեղագիտություն
4. Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում
5. Կառավարում
6. Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա
7. Իրավագիտություն
8. Միջազգային հարաբերություններ
9. Հայոց լեզու և գրականություն

10. Օտար լեզու և գրականություն
11. Մանկավարժություն և հոգեբանություն
12. Մանկավարժություն և մեթոդիկա
13. Դիզայն(գեղարվեստ.)
14. Հագուստի մոդելավորում
15. Գեղանկարչություն
16. Բնապահպանություն և բնօգտագործում
17. Լրագրություն
18. Ֆինանսներ

ԳՅՈՒՄՐՈՒ «ՇԻՐԱԿԱՑԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

1. Հայոց լեզու և գրականություն
2. Օտար լեզու և գրականություն
3. Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում
4. Իրավագիտություն
5. Տեղեկատվական համակարգեր /ըստ ճյուղերի/

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Կրթության որակի ապահովումը շարունակական գործընթաց է. այն երբեք կանգ չի առնում, քանի որ կապված է իրական կյանքին, իսկ կյանքը անընդհատ կատարելագործվում, փոփոխվում է և անձին, հասարակությանը առաջադրում նոր պահանջներ: Ուստի այն, ինչն այսօր կատարյալ ու ամբողջական է թվում, վաղը կարող է դառնալ թերի, անկատար, հնացած: Նշանակում է՝ մարդու գիտելիքների, կարողունակությունների, հմտությունների լրացումը տեղի է ունենում ողջ կյանքի ընթացքում, իսկ ժամանակակից բուհի համար հրամայական է կրթական ծառայությունների որակի գնահատումը, մշտադիտարկումը բարելավումը:

Երևանի «Հայբուսակ» համալսարանը առաջնորդվում է «Ընթանալ կյանքին համահունչ» կարգախոսով, ինչի արդյունքում քայլ առ քայլ մոտենում է միջազգային հեղինակավոր կրթական հաստատություններին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՎ ՄԵԶԲԵՐՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, Ե., 2004:
2. Բարձրագույն ուսումնական հաստատության ինքնավերլուծության գործընթացի մեթոդաբանություն և գործիքներ (Մեթոդական ցուցումներ), Ե., 2013:
3. Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի որակի ապահովման ուղեցույց, Ե., 2016:
4. ԵՊԲՀ որակի ապահովման քաղաքականություն, Ե., 2013:
5. ԵՊՀ-ի կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար, Ե., 2016:
6. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. մասնագիտական կրթություն և մասնագիտական զարգացում, Ե., 2003:
7. Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի որակի ներքին ապահովման ուղեցույց, Ե., 2012:
8. Կարգ ՀՀ բուհերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման:
9. Կարգ ՀՀ բուհերում ուսանողների հեռացման(ազատման) և վերականգնման:
10. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք (ՀՊՃՀ), Ե., 2006:
11. «Կրթության մասին» ՀՀ օրենք, Ե., 1999:
12. Հայեցակարգ Երևանի պետական համալսարանի որակի ապահովման, Ե., 2012:
13. ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի 2016-2020թթ. իրականացման ռազմավարություն, Ե., 2016:
14. ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի օգտագործման ուղեցույց, Ե., 2017:
15. ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի 101 եզրույթների բացատրական բառարան, Ե., 2017:
16. ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկ (ուսումնամեթոդական ուղեցույց), Ե., 2013:
17. ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ. «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում», Ե., 2011:
18. ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ, Ե., 2015:
19. Որակի ապահովման բուհական համակարգեր (ուղեցույց), Ե., 2009:
20. Որակի ապահովման տերմինաբանական բառարան, Ե., 2010:
21. Պետրոսյան Հ.Հ. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Ե., 2008:
22. Ուսումնական նյութերի ժողովածու (Tempus), Ե., 2014: